- պրակտիկայի ղեկավարի, մեթոդիստի, հոգեբանի, տվյալ առարկայի ուսուցչի՝ պրակտիկանտի մասնագիտական գործունեությանը մասնակցության, միջամտության, ակտիվ ղեկավարության աստիճանը,
- ուսանողի կողմից մասնագիտական գործունեության ինքնուրույն կազմակերպումը, սեփական գործունեության ինքնավերլուծությունն ու ինքնագնահատումը, տեսական գիտելիքների գործնականում կիրառումը, մանկավարժական փորձի ձեռքբերման ձգտումը, այդ փորձի խոր ուսումնասիրությունն ու վերլուծությունը, մանկավարժական ուղղվածությունը,
- սերը և հետաքրքրությունը երեխաների նկատմամբ, մանկավարժական գործունեությամբ հրապուրվածությունը, հոգեբանամանկավարժական պատրաս–տությունը, նպատակասլացությունը, աշխատասիրությունը,

- կազմակերպչական և հաղորդակցական կոմպետենցիաների առկայությունը, պահանջկոտությունը, կայունությունը, հավասարակշռվածությունը, զսպվածությունը, ինքնագնահատման ունակությունը,
- մասնագիտական-մանկավարժական գործունեության խնդիրների և նպատակների գիտակցումը վերջնական և միջանկյալ արդյունքների նախնական վերլուծության հիման վրա,
- դասի և արտադասարանական միջոցառումների ինքնուրույն պլանավորումը,
- ուսուցման մեթոդների ու եղանակների, զննական նյութերի, սովորողների գործունեության ձևերի (անհատական, խմբային, կոլեկտիվ) ինքնուրույն ընտրությունը,
- ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքների գնահատումը, սեփական գործունեության ինքնագնահատումը, քննադատական վերաբերմունքը սխալների և բացթողումների նկատմամբ:

Մեր կողմից մշակված ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստության մոդելի կառուցվածքում նախագծվել են մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողների պատրաստության **ցածր, միջին և բարձր** մակարդակները և ներկայացվել են դրանց չափանիշները:

Ցածր մակարդակում գտնվող ուսանողները մասնագիտական պատրաստության գործընթացում դրական արդյունքների են հասնում միայն դասախոսների ղեկավարությամբ և օժանդակությամբ: Այս մակարդակում գտնվող ուսանողներին բնորոշ է կախվածությունը դասախոսից, մասնագիտամանկավարժական ուղղվածությունը և դրդապատճառները բավականաչափ ձևավորված չեն, բացակայում է մասնագիտական գործունեության ինքնուրույն կազմակերպման կարողությունը: Ցածր մակարդակը դիտարկենք ըստ մասնագիտական պատրաստության բաղադրատարրերի՝

- իմացական բաղադրատարրը թույլ է ձևավորված, գործունեության նպատակը գիտակցվում է, այնուհանդերձ գործունեության արդյունքները կանխավ ներկայացվում են դասախոսի օգնությամբ, այդ գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ գիտելիքները ևս ձևավորվում են դասախոսի աջակցությամբ, որն էլ տրամադրում է ուսումնական տեղեկատվությունը,
- վերահսկողական և կազմակերպական բաղադրատարրը ոչ բավականաչափ է ձևավորված, դասի և արտադասարանային միջոցառումների պլանը կազմվում է դասախոսի հետ համատեղ, ուսուցման մեթոդների ու եղանակների ընտրությունն ու կիրառումը քննարկվում են դասախոսի հետ,
- դրդապատճառային բաղադրատարրը լիովին ձևավորված չէ, գործունեության դրդապատճառները թույլ են արտահայտված, դժվարությունների հանդիպելիս ուսանողն անմիջապես դիմում է դասախոսի օգնությանը, դասախոսը հսկում է աշխատանքի կատարման ընթացքը, ստացված արդյունքները, վերլուծում և գնահատում է դրանք,
- հաղորդակցական բաղադրատարրը լիարժեքորեն չի դրսևորվում, ուսանողը ձգտում է սոսկ իրականացնել դասախոսի պահանջները, խուսափում է այլ շփումներից:

Միջին մակարդակում են գտնվում այն ուսանողները, որոնց գործունեության մեջ շեշտը դրվում է կոլեկտիվ փոխգործունեությանը: Դասախոսի ղեկավարությունը լիարժեք չէ, ուսանողը գիտակցում է մասնագիտամանկավարժական գործունեության ինքնուրույն կազմակերպման անհրաժեշտությունը, ընդսմին այն մասնակիորեն իրականանում է, մանկավարժական ուղղվածությունը դեռևս բավարար չափով արտահայտված չէ: Ըստ մասնագիտական պատրաստության գործընթացի բաղադրատարրերի՝ պատկերը հետևյալն է՝

- իմացական բաղադրատարրը բավականաչափ զարգացած է, գործունեության նպատակը գիտակցվում է ուսանողի կողմից, արդյունքները նախապես ներկայացվում են խմբի քննարկմանը, գիտելիքները ինքնուրույնաբար ձեռք են բերվում դասագրքերից, ձեռնարկներից, տեղեկատվական այլ աղբյուրներից և համատեղ քննարկվում են խմբում,

- վերահսկողական և կազմակերպական բաղադրատարրերը լիարժեք ձևավորված չեն, մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը կազմվում է խմբային քննարկումից հետո, ուսուցման մեթոդներն ու միջոցները ընտրվում են մեթոդիստի և ընկերների հետ՝ համատեղ ուժերով, պրակտիկանտները փոխադարձաբար նշում են միմյանց սխալներն ու վրիպումները, իրականանում է փոխօգնություն և փոխադարձ հսկողություն,
- դրդապատճառային բաղադրատարրը բավականաչափ ձևավորված է, դժվարությունները հաղթահարվում են համակուրսեցիների օգնությամբ,
- հաղորդակցական բաղադրատարրը բավականին զարգացած է, սեփական գործունեության դրական արդյունքները թույլ են տալիս օգնել ընկերներին, ստեղծել միջանձնային ակտիվ հարաբերություններ՝ հիմնված փոխադարձ աջակցության վրա:

Մասնագիտական պատրաստության **բարձր** մակարդակում գտնվող ուսանողներին բնորոշ է մանկավարժական ուղղվածությունը, մանկավարժական գործունեության ինքնուրույն կազմակերպման անհրաժեշտությունը խորապես գիտակցված է, մասնագիտական պատրաստության գործընթացի բովանդակային բոլոր բաղադրատարրերը բավականաչափ զարգացած են և փոխկապված: Գործունեության նպատակը գիտակցված է, արդյունքները վերլուծվում ու գնահատվում են ինքնուրույնաբար: Մասնագիտամանկավարժական գործունեության համար անհրաժեշտ բոլոր գիտելիքները ձեռք են բերվում և կիրառվում են ինքնուրույնաբար: Մանկավարժական պրակտիկայի ընթացքում ուսանողները ինքնուրույն պլանավորում են ուսումնադաստիարակչական աշխատանքը, ընտրում են ուսուցման մեթոդներ, միջոցներ, ձևեր: Ուսանողներն ինքնուրույն վերլուծում են թույլ տրված սխալները, փորձում են գտնել իրենց անհատական ոճը, իրականացնում են գործունեության ակտիվ վերահսկողություն, ձգտում են ինքնուրույնաբար հաղթահարել դժվարությունները և օգնել ընկերներին սեփական գործունեության արդյունավետության հիման վրա:

Статья была представлена во время работ в 5-ой секции.

О ПРОБЛЕМЕ ВКЛЮЧЕНИЯ ЭЛЕМЕНТОВ ЛОГИКИ В ШКОЛЬНЫЙ КУРС МАТЕМАТИКИ

Мкртчян А.Т.

Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, Ереван, Республика Армения, Araqsya8582@yandex.ru

Аннотация. В статье представлена проблема обучения логических элементов в общеобразовательной школе, включение их в курс математики, работы и мнения известных методистов по этому вопросу. Представляются результаты научных экспериментов, чем обосновываются те недостатки, которые возникают из-за неполноценного логического образования.

Ключевые слова: элементы логики, школа, алгебра, обучения математики, методология.

ABOUT A PROBLEM OF INCLUSION THE ELEMENTS OF LOGIC IN A SCHOOL COURSE OF MATHEMATICS

Mkrtchyan A.T.

Abstract. In article the problem of training of elements of logic at comprehensive school, history and a present condition of a theoretical and practical readiness of this problem is considered. Results of scientific experiments are represented, the shortcomings of process of mathematical education arising because of defective logical education come to light.

Key words: elements of logic, school, algebra, mathematics teaching, methodology.

Проблема изучения элементов логики в рамках общеобразовательной школы обсуждён в работах разных исследователей. Выделяют два крайних подхода специалистов. Сторонники первого подхода считают, что нет необходимости внести в общее образование отдельный предмет по логике или специальные логические структуры в школьный курс математики. Сторонники же второго подхода, напротив, утверждают, что надо ввести в среднюю школу определенный запас логики – в виде отдельного предмета по логике или в виде отдельных тем в курсе математики [1].

Проблема обучения элементов логики в общеобразовательной школе, их включения в курс математики тщательно изучен известным методистом А. А. Столяром [8]. Преподавая математику, затем логику в старших классах общеобразователной школы он пришел к выводу, что отдельное преподавание этих предметов не является эффективным. И преподавания математики и логикисовместно - "логику в математике", он достиг серьёзных успехов.

Р. С. Черкасов и А. А. Столяр считают, что изучая математику – учащиеся овладеювают умением анализировать, обобщать, конкретизировать, отделить необходимые и достаточные условия, определять понятия, составлять суждения. Все это формирует мышление учащихся и способствует развитию речи, особенно развивает такие качества выражения мысли, как порядок, точность, ясность, лаконичность, обоснованность [9, 4]. Таким образом, роль элементов логики в теоретическом и практическом обучении математики заключается в том, что, во-первых, усвоения общелогических действий мышления является необходимым условием для формирования и развития познавательной деятельности, а затем, переработанные в рамках математической логики некоторые общие понятия (высказывание, предикат, логические действия, отношения вывода и эквивалентности и т.д.) способствуют раскрытию рассматриваемых математических структур и более глубокому восприятию их математических содержаний.

В. И. Рыжик также согласен с тем мнением, что нет необходимости преподавать в школе отдельный предмет логика, а необходимо включить отдельные элементы логики в школьный курс математики. Рыжик также приводит ряд аргументаций в пользу введения в школьный курс математики элементов логики, из которых выделим на наш взгляд важные. Это:

- способствует повышению логической культуры учеников,
- может помогать формированию правильной речи,
- может способствовать освоению математических утверждений,
- помогает освоению основ информатики,
- во время решения задач логического характера,
- работа с предикатами естественым образом взаимосвязана с основными понятиями теории множеств, без которых современное математическое образование имел бы странную форму [6, 36].

Г. И. Саранцев считает, что учащиеся очень часто допускают ошибки, которые связаны с неправильным пониманием рода и вида понятия. Часто встречаются ошибки, когда ребенок в определении не отмечает под понятия, совершает так называемую ошибку "порочный круг", формирует определения – пропуская в нем отдельные слова. Исходя из опыта многих учителей, он приходит к выводу, что формирование ни одного математического понятия в школе не включается в его логической схеме. В основном, понятие (без определения) непосредственно и сразу применяется во время решения задач. Учитывая то, что ученики младших классов не понимают смысл необходимости и достаточности, эквивалентности утверждений, им остается изучать наизусть определения понятий и под диктовку учителя решать задачи [7].

Для выявления состояния логической образованности, мы провели опрос как среди старшеклассников, так и среди студентов первого курса, только-что поступивших в ВУЗ. Результаты экспериментов ясно показывают, что без логики, обучение математики с традиционными методами не обеспечивает существенного развития логического мышления.

а) обучающиеся с традиционными методами учащиеся считают, что, например, $5\leq5$, $2\leq2$ высказывания являются ложными, таккак не понимают смысл логической суммы высказываний. Незнание смысла логической суммы часто приводит, также к серьезным математическим ошибкам [3, 40-47].

б) подавляющее большинство учащихся (а также студенты, которые не имеют специальной логической подготовки) не в состоянии правильно строить отрицание высказываний с сложными логическими структурами, и этим объясняется часто встречающие ошибки в их суждениях, в частности в вспомогательных доказательствах [4, 6-8].

в) Связки вида "Если ..., то …", "От ... следует ..." и т.д. часто встречаются в математических текстах, в том числе и в школьных учебниках, восприятие которых осуществляется только на интуитивном уровне, что в некоторых случаях приводит к неточностям, особенно, когда логические связки непосредственно отождествляются с грамматическими связками.

г) интуитивное восприятие импликации недостаточно для безошибочноговыполнения действия отрицания сложных высказываний с логическим союзом "если ..., то ...".

д) Представление кванторов по-прежнему осуществляется на интуитивном уровне, в последствии чего возникают трудности во время восприятия смысла теорем с общими и частными суждениями и во время осуществления логических действий по отношению к ними. Возникают серьёзные логические проблемы особенно во время совершения действия отрицания по отношению к суждениям, содержащими кванторы.

е) Отрицание, как логическое действие часто воспринимается ошибочно, оно отождествляется с опровержением. Известно, что опровержение является таким логическим действием, с помощью которого показывается ложность какого-то утверждения.Следовательно, опровергаться может только ложное или необоснованное утверждениеЭто является серьёзным пропуском в организации образовательных и воспитательных работ, так как в жизни часто возникает необходимость опровержения.

ё) Освоение простых правил вывода не означает овладение, так, как освоение грамматических законов еще не означает, что тот кто их знает, может каждый раз определить какой закон должен применить для изложения своих мыслей? Однако, педагогический опыт показывает, что обучение простейших правил выводимости и упражняемость к их применению, приводят к развитию интуиции по направлению составления правильно построенных суждений.

ж) Наблюдения показывают, что учащиеся многократно сталкиваются с определениями, к тому же с легкостью могут воспроизвести разнообразные определения понятий. Однако во время изложения определений, обычно совершают много ошибок, и в основном по той причине, что никогда не исследовали, что такое определение или каким законам оно подчиняетя и как надо выполнять эти действия? То же самое относится и к другим логическим действиям: классификации, доказательству, опровержению и т.д. Про них учащиеся имеют только общие, несвязные представления, и они никогда не были специальным предметом обучения. И если фундаментальная наука об общих законах мышления - логика, в полной мере не включается в учебные программы, то возникает состояние неполноценного логического образования.

Можно представить список типичных ошибок, но сказанное дает достаточных оснований утверждать, что для развития логического мышления учащихся и для повышения уровня логической грамотности, необходимо усилить роль логического компонента в учебных программах.

Следует отметить, что все нам известные попытки прошлого включения логики в среднюю школу как отдельного предмета, так и в виде отдельных тем в курсе математики, в основном были неудачными [6, 48]. Такие попытки совершались в XIX и в XX веках - в разных странах. Среди них, в рамках колмогоровских программ, интересны опыты некоторых учёных (В Болтянский, А. А. Столяр и т.д.) [9], которые в конечном итоге уступили свое место традиционным подходам. В 1999 году, в учебник Г. С. Микаеляна ‘Алгебра 8’ [2] общеобразовательной школы Республики Армения, логические элементы вводились в качестве отдельного раздела, в котором осуществлялось своеобразное изложение элементов логики на основе математического материала. Но 12-летний этот опыт, достоен отдельному освещению.

Литература

1. Այվազյան Է.Ի., «Տրամաբանության հանրահաշիվը» թեմայի ուսուցման մասին, //Մաթեմատիկան դպրոցում, N 3-4, Եր., 1999 թ., 48-56 էջեր:АйвазянЭ. И., Обобученииитемы "Логическая алгебра"//Математика в школе /на армянском языке/ N 3-4, Ереван, 1999г., стр. 48-56:
2. Միքայելյան Հ.Ս., Հանրահաշիվ 8, Հանրակրթական դպրոցի դասագիրք, Եր., 2007, 304 էջ:
   Микаелян Г.С., Алгебра 8, Учебник общеобразовательной школы /на армянском языке/, Ереван, ., 2007г., 304 с.
3. Միքայելյան Հ.Ս., «Տրամաբանությանհանրահաշիվը» թեմայիուսուցմանմասին// Մաթեմատիկանդպրոցում, N3-4, Եր., 1999, 40-47 էջեր:МикаелианГ. С., Обобучении темы "Логическая алгебра" //Математика в школе /на армянском языке/ N 3-4, Ереван, 1999г., стр. 40-47:
4. Միքայելյան Հ.Ս., Տրամաբանության ուսուցումը հանրահաշվի դասընթացում// Մաթեմատիկայի ուսուցման արդի հիմնահարցերը, Գիտամեթոդակա նհոդվածների ժողովածու, Պրակ 1, Եր., 2002 թ., 184 էջ:

Микаелиан Г. С., Обучение логики в курсе алгебры //Современные вопросы обучения математики, сборникнаучно-методических статьей /на армянском языке/ Прак 1, Ереван, 2002 г., 184с.
5. Петров Ю.А., Столяр А.А. Какая логика нужна учителю? (http://www.bimbad.ru/biblioteka/article_full.php?aid=910)
6. Рыжик В.И., Логика в школьном математическом образовании//Математика в школе, N3, 2007 г., стр. 31-37.
7. Саранцев Г.И., Методика обучения математике в средней школе, Москва, Просвещение, 2002 г., 226 с.
8. Столяр А.А., Логические проблемы преподавания математики, Минск, Высшая школа, 1965 г., 255 с.
9. Черкасов Р.С., Столяр А.А., Методика преподавания математики в средней школе, Москва, Просвещение, 1985 г.,336 с.

Статья была представлена во время работ в 6-ой секции.

КОЛЛЕКТИВНЫЕ УЧЕБНЫЕ ЗАНЯТИЯ КАК СПОСОБ РЕШЕНИЯ ЗАДАЧ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ

Мкртчян В.Дж.

Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна, Ереван, Республика Армения,
mkrtchyanvaditer@gmail.com

Аннотация. В настоящее время в классно-урочном системе, в которой проводятся групповые учебные занятия, разрабатываются разные методы и способы для более результативной организации работы с учениками, имеющими нужду в особых условиях образования, учитывая их проблемы и особенности. Но несмотря на то, что эти методы упрощают ситуацию, они не дают четкого решения. Принципы коллективных учебных занятий и их структурные особенности соответствуют требованиям инклюзивного образования и могут быть эффективным способом решения проблем инклюзивного образования.

COLLECTIVE TEACHING PRACTICES AS A WAY OF SOLVING INCLUSIVE TEACHING ISSUES

Abstract. Nowadays different methods and techniques are developed in the system of classroom teaching aimed at making the work with pupils with special needs more productive. Although these methods simplify the situation they do not provide a final solution.

The principles applied in Collective teaching practices and their structural peculiarities meet the demands of the inclusive education and can serve as an efficient solution to the problems thereof.

Key words: Inclusive education, educational problems, Collective teaching practices.

ԿՈԼԵԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՈՑ

ՀՀ-ում բազմաթիվ ներդրումներ են արվում ներառական կրթության բարելավման և զարգացման նպատակով, այնուամենայնիվ տվյալ ոլորտը դեռ սաղմնային վիճակում է գտնվում մեր երկրում և ուսուցման գործընթացի կազմակերպման ընթացքում ուսուցիչները բազմաթիվ խնդիրների առաջ են կանգնում:

Ներառական ուսուցման կազմակերպման հիմնական խնդիրները, հաճախ են առաջ քաշվում ուսուցիչների կողմից հետևյալներն են՝

1.դասարանների մեծաքանակությունը /25 և ավելի սովորող/,
2.մտավոր խնդիրներ, ագրեսիվ վարք ունեցող երեխաների ներառումը,
3.ուսուցիչների վերապատրաստումների բացակայությունը,
4.ուսուցման գործընթացի կազմակերպման բնույթը[1]:

Որպես ներառական ուսուցման խնդիրների լուծման միջոց՝ կոլեկտիվ ուսումնական պարապմունքներն առավել ցայտուն են դրևսևորվում, երբ վերջիններիս, ներառական կրթության և խմբային ուսումնական պարապմունքների միջև տարվում են համեմատականներ, նպատակների, սկզբունքների զուգորդումներ:

Դիտարկելով ներառական կրթության բնույթն ու առանձնահատկությունները՝ կարող ենք ասել, որ նրա կարևորագույն նպատակներն են՝ ուսումնական գործընթացում սովորողների բազմազանության ընդունումը, հաշվառումը՝ յուրաքանչյուր սովորողի պահանջմունքներին, կարիքներին, առանձնահատկություններին համապատասխան, խտրականությունը բացառող ինչպես նաև սոցիալականացման գործընթացին նպաստող կրթական միջավայրի ապահովումը:

Նշենք, որ ներկայումս դաս-դասարանային համակարգում, որտեղ իրականցվում են խմբային ուսումնական պարապմունքներ, ելնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ներառված սովորողի խնդիրներից, առանձնահատկություններից, տարբեր մեթոդներ և միջոցներ են մշակվում նրանց հետ աշխատանքն արդյունավետ կազմակերպելու համար, սակայն դրանք որոշակիորեն մեղմացնում են ստեղծված իրավիճակը, սակայն խնդրին հստակ լուծում չեն տալիս:

Օրինակ՝ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների համար կազմվում է անհատական ուսումնական պլան /ԱՈՒՊ/՝ ելնելով վերջիններիս անհատական առանձնահատկություններից:

Սակայն ԱՈՒՊ-ը էապես չի նպաստում այն բանին, որ ներառված սովորողը մյուսների հետ մասնակցի ուսումնական գործընթացին, հաղորդակցվի նրանց հետ:

Մելիքսեթյանը նշում է, որ խտրականության դեմ տարվող պայքարում խտրականության ուժեղ դրսևորում է ինքնին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կազմված ԱՈՒՊ-ի առկայությունը հանրակրթական դպրոցում[2]:

Ներառված սովորողը, ներկա գտնվելով դասարանում, առանձին հանձնարարություն է ստանում ուսուցչի կողմից և աշխատում է այդ հանձնարարության շուրջ, ինչն էլ խոչընդոտում է նրա սոցիալականացմանը և առհասարակ ներառական կրթության կարևորագույն նպատակների իրականացմանը: Տվյալ պարագայում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողը ապահովում է զուտ ֆիզիկական ներկայություն: Բացի այդ, այն կարող է սովորողի մոտ առաջացնել մեկուսացվածության զգացում, թերարժեքության բարդույթ, նրա համար ստեղծել ուսումնական նյութի յուրացման խոչընդոտներ և մի շարք այլ բացասական երևույթներ:

Ակնհայտ է, որ ընտրված միջոցի արդյունավետությանը էապես խոչընդոտում է խմբային ուսումնական պարապմունքներում ընդհանուր ճակատի բացարձակ առկայությունը /ընդհանուր ճակատի բացակայության զրոյական մակարդակ[3]/:

Արդի ներառական դպրոցներում մի շարք ինտերակտիվ մեթոդների կիրառման միջոցով՝ ընդհանուր ճակատը երբեմն չնչին մակարդակով խախտվում է /առաջին մակարդակ/:Այն որոշակիորեն ընդլայնում է սովորողների անհատական առանձնահատկությունների հաշվառման հնարավորությունները, սակայն ունի շատ սահմանափակումներ:

Նկատենք, որ ընդհանուր ճակատի բացակայությունը կոլեկտիվ ուսումնական պարապմունքների առաջնային հատկանիշներից մեկն է:

Ընդհանուր ճակատի բացակայությունը և կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ևս երկու կարևորագույն հատկանիշների /անհատական երթուղի, սովորողների ժամանակավոր կոոպերացիաներ/ առկայությունը ներառական ուսուցման իրականացման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում: Այն հնարավորություն է տալիս հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի, այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց անհատական առանձնահատկությունները՝ կարիքները, հետաքրքրություններն ու հնարավորությունները, ուսումնական նյութի և մի շարք կարողությունների, հմտությունների յուրացման տեմպը, միջոցներն ու ձևերը:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներն ըստ էության իրենց գործունեությամբ չեն տարբերվում մյուս սովորողներից, քանի որ ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործունեության անհատականացվածությունը դիտվում է որպես բնական երևույթ:

Վերը նշված երեք հատկանիշների առկայության, ինչպես նաև կոլեկտիվ ուսումնական պարապմունքների գլխավոր սկզբունքի/յուրաքանչյուրը նպատակ է, յուրաքանչյուրը միջոց/ շնորհիվ ներառված սովորողը բնականոն ձևով հայտնվում է համագործակցային փոխհարաբերություններում ուսումնական խմբի մյուս անդամների հետ:

Ի տարբերություն խմբային ուսումնական պարապմունքների, որտեղ սովորողների միջև հստակ տիրում է մրցակցություն և որտեղ ի հայտ են գալիս գերազանցիկներ, միջակներ, ծույլիկներ, առավել ևս ներառված սովորողի «անկատարությունը», կոլեկտիվ ուսումնական պարապմունքներում յուրաքանչյուրը առանձնահատուկ է, հաջողակ է, գնահատվում է իր ընդունակությունների, աշխատունակության համապատասխան, մյուս սովորողներին դիտում է որպես սեփական նպատակներին հասնելու կարևորագույն միջոց, ինչն էլ դրդում է համագործակցության:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ ներառված սովորողը ուսումնական խմբի գործուն մասնակից է, ով անմիջականորեն հաղորդակցվում է ուսումնական խմբի մյուս անդամների հետ:

Բյուրակն կրթահամալիրում հետազոտություն անցկացնելիս, պարզեցինք, որ այնտեղ կոլեկտիվ ուսումնական պարապմունքներին զուգահեռ հատուկ տեղ է տրվում հաստատուն կազմով ջոկատների գործունեությանը,ինչը կարող է հանդիսանա ներառված սովորողի սոցիալականացմանը, ինչպես նաև մյուս սովորողների մեջ մարդասիրական գաղափարախոսության զարգացմանը էապես նպաստող հանգամանք: Տվյալ պարագայում ինքնաանդրադարձ վերլուծությունների ժամանակ/ որոնք տեղի էին ունենում ամեն օր/ քննարկվում և վերլուծվում են խմբի յուրաքանչյուր անդամի հետ տեղի ունեցած իրադրությունները, խնդիրները, դժվարությունները, արվում են առաջարկություններ, անհրաժեշտության դեպքում հարցը բարձրաձայնվում է մեծ ինքնաանդրադարձ վերլուծության ժամանակ /որը տեղի է ունենում շաբաթը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում արտահերթ քննարկում կարող է հրավիրվել/, որին ներկա են լինում բոլոր խմբերը և ուսուցչական ողջ կազմը:Ինքնաանդրադարձ վերլուծությունները սովորողների, այդ թվում նաև ներառված աշակերտների մոտ առաջացնում են ինքնավստահություն, սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու, դպրոցական կյանքի վերաբերյալ որոշումներ ընդունելու և մյուսների կողմից հասկացված լինելու հնարավորություն, սեփական արարքների նկատմամբ պատասխանատվության զգացում, մյուսների կարծիքն ու մոտեցումները հարգելու պարտավորվածություն:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքներում ներառական կրթությանը նպաստող կարևոր հանգամանքներից է ուսուցչական կոոպերացիայի գործունեությունը: Տվյալ պարագայում ներառված սովորողի համար ուսուցման գործընթացն առավել արդյունավետ կլինի, քանի որ ուսուցչական կոոպերացիայի կազմին կմիանան նաև հատուկ մանկավարժը, սոցիոլոգը, հոգեբանը և այլ անհրաժեշտ անձինք, ովքեր էապես կնպաստեն տվյալ սովորողի կոլեկտիվ ուսումնական պարապմունքներում իրականացվող գործունեության արդյունավետ կազմակերպմանը /համապատասխան մեթոդների և միջոցների ընտրություն, մյուս սովորողների հետ համագործակցելու հնարավոր տարբերակների օգտագործում և այլն/:

Բացի այդ, հայտնի է, որ կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ որպես սովորողի զուգընկեր կարող է հանդես գալ, թե՛ աշակերտը, թե՛ առարկայի մասնագետը, թե՛ օգնող անձը /ով կարող է չլինել տվյալ առարկայի մասնագետը, ավելին կարող է լինել հատուկ մանկավարժ, հոգեբանը և այլն/: Մելիքսեթյանը նշում է, որ կոլեկտիվ պարապմունքների ժամանակ ուսուցման գործընթացը կազմակերպվում է այնպես, որ հատուկ մանկավարժը /լոգոպեդը, սուրդոմանկավարժը, օլիգոֆրենոմանկավարժը/ մտավոր և ֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների հետ նախատեսվող անհատական շտկողական աշխատանքներ, հնարավորություն է ունենում իրականացնել ուսուցման գործընթացի ժամանակ: Իհարկե, այդ ամենը նախապես պլանավորվում է, քանի որ նման պարապմունքների ընթացքում բացի այն, որ կա ընդհանուր աշխատանքային պլան, դրա հետ մեկտեղ կա նաև յուրաքանչյուր աշակերտի համար կազմված անհատական աշխատանքային պլան, որը դինամիկ է, և ուսուցիչը, որոշ ուսումնադաստիարակչական խնդիրներից ելնելով, հնարավորություն ունի այն փոփոխելու[2]:

Ներառական կրթության համար կարևոր հանգամանքներից է նաև այն, որ կոլեկտիվ ուսումնական պարապմունքներում առաջնային պլան են մղվում սովորողների միջանձնային հարաբերությունների, կարողությունների, հմտությունների, այլ ոչ թե զուտ գիտելիքների ձևավորման խնդիրները: Կոլեկտիվ ուսումնական պարապմունքները սովորողների, այդ թվում նաև ներառված սովորողի մոտ ձևավորում են հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գիտելիքների ձեռք բերման, ինչպես նաև ինքնակառավարման կարողություններ /ներառված սովորողի համար՝ հնարավորույթյունների մակարդակին համապատասխան/:

Մտավոր խնդիրներ, ագրեսիվ վարք դրսևորող սովորողների ներառման հարցը կոլեկտիվ ուսումնական պարապմունքներում լուծվում են այնքանով, որ տվյալ աշակերտը չի կարող խոչընդոտ հանդիսանալ մյուսների ուսումնական գործընթացի բնականոն ընթացքին, այն դեպքում, երբ խմբային ուսումնական պարապմունքների ժամանակ վարքային որևէ շեղում խանգարում էր ողջ խմբի աշխատանքին:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների հիմնական մեթոդիկաները հնարավորություն են տալիս հաշվի առնել ներառված սովորողի անհատական առանձնահատկությունները:

Հայտնի է, որ կույր մարդը չի տեսնում, սակայն մշակվել է բրայլյան համակարգ, որը նրան գերլու և կարդալու հնարավորություն է ընձեռում: Վերջինիս շնորհիվ կոլեկտիվ ուսումնական պարապմունքների գրեթե բոլոր մեթոդները կիրառելի են դառնում նրա համար /բնականաբար անհրաժեշտություն կլինի ստեղծել համապատասխան տարբեր դիդակտիկ նյութեր, բարյլյան համակարգով գրված քարտեր, տեքստեր և այլն/, որի արդյունքում կույր սովորողը լիարժեք կարող է մասնակցել ուսումնական գործընթացին:

Օրինակ՝ Րիվինի մեթոդիկան կիրառելու համար զննականության տեսանկյունից, պահանջվում է համապատասխան տեքստի բրայլյան գրառում, ինչպես նաև համապատասխան գրով գրելու պարագաներ:

Համահավաք ջոկատում յուրաքանչյուր սովորողի, այդ թվում նաև կույր սովորողին տրվում է իր թեման: Ի տարբերություն մյուս սովորողների, կույր սովորողի մոտ տեքստը բրայլյան համակարգով է:

Առաջին պարբերությունը զուգընկերոջ հետ մշակելու համար կույր երեխան բարձրաձայն ընթերցում, ապա վերջինիս հետ քննարկում, պարզաբանում է բովանդակությունը և վերնագրում է այն: Վերնագիրը բրայլյան համակարգով գրում է համապատասխան տետրում, որից հետո օգնում է զուգընկերոջը հասկանալ իր պարբերությունը և վերնագրել:

Դրանից հետո, իր երկրորդ պարբերության մշակման համար կույր սովորողը սկսում է աշխատել նոր զուգընկերոջ հետ: Պատմում է նրան առաջին պարբերության բովանդակությունը, ապա բարձրաձայն ընթերցում է երկրորդ պարբերությունը և զուգընկերոջ հետ քննարկում, պարզաբանում է վերջինիս բովանդակությունը, վերնագրում է և վերնագիրը գրում ՝ համապատասխան տետրում: Նույն կերպ նա օգնում է ընկերոջը՝ լսում է նրան, օգնում հասկանալ պարբերությունը, վերնագրել այն:

Այնուհետև համապատասխան ձևով ներառված սովորողը/կույր/ մշակում է իր մնացած պարբերությունները:

Ամբողջ տեքստը մշակելուց հետո, ստացած գիտելիքների ամրապնդման և համակարգման համար, սովորողը այդ թեմայով ելույթ է ունենում փոքր /ժամանակավոր/ խմբի առջև կամ քննարկում է տվյալ թեման փոքր խմբում:

Արդյունքում կույր սովորողը մյուս սովորողների հետ միասին լիարժեքորեն մասնկացում է ուսումնական գործընթացին, յուրացնում է ուսումնական նյութը, ձեռք է բերում մի շարք կարողություններ /հաղորդակցական, համագործակցային և այլն/:

Պարզ է, որ այլ խնդիրներ ունեցող սովորողների համար որոշ մեթոդներ կլինեն կիրառելի, որոշ մեթոդներ՝ ոչ: Ըստ այդմ՝ պարզելու համար, թե ներառված սվորողների ո՛ր խնդիրների դեպքում կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ո՛ր մեթոդներն են առավել նպատակահարմար, անհրաժեշտ է իրականացնել խոր ուսումնասիրություններ:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքները, լուծելով սովորողների անհատական առանձնահատկությունների հաշվառման կարևորագույն խնդիրը, արդյունավետ կրթական պայմաններ են ստեղծում առհասարակ յուրաքանչյուր սովորողի համար, ինչը արդի հարնակրթության կարևորագույն պահանջներից մեկն է:

Նկատենք, որ կոլեկտիվ ուսումնական պարապմունքները հսկայական աշխատանք են պահանջում ուսուցիչներից /կոլեկտիվ ուսումնական պարապմունքների իրականացման մեթոդական հմտությունների, գիտելիքների ձեռքբերում, դիդակտիկ նյութերի ստեղծում, սովորողների անհատական առանձնահատկությունների բացահայտում և այլն/:

Տեսականորեն կատարեցինք վերլուծություններ, համադրումներ, առաջ քաշեցինք գաղափարներ և դատողություններ, այնուամենայնիվ կոլեկտիվ ուսումնական պարապմունքների արդյունավետությունը ներառական կրթության բնագավառում գործնականորեն փորձարկելու համար հսկայական միջոցներ, ներդրումներ, ուսումնասիրություններ են պահանջվում, քանի որ թե՛ ներառական կրթությունը, թե՛ կոլելկտիվ ուսումնական պարապմունքները գտնվում են զարգացման որոշակի փուլում:

Գրականություն

1. Մկրտչյան Վ., Ներառական կրթության հիմնախնդիրները դաս-դասարանային համակարգի պայմաններում/տարրական դպրոց/, «Մանկավարժության ժամանակա–կից հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, «Զանգակ» հր., Երևան 2015, 139-143 էջեր:
2. Մելիքսեթյան Ա., Ներառական ուսուցումը և դրա իրականացման հիմնական դժվարությունները, «Մանկավարժություն» ամսագիր, 3-4, 2007թ.,56-66 էջեր:
3. Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Հեղ. հրատ., Երևան, 2011թ.,146 էջ:

Статья была представлена во время работ в 6-ой секции.

АНИЗОТРОПИЯ НЕМАТИЧЕСКИХ ЖИДКИХ КРИСТАЛОВ ТИПА 5CB В ОБЛАСТИ РЕНТГЕНОВСКИХ ЧАСТОТ

Мкртчян В.П., Гаспарян Л.Г.

Ереванский государственный университет, Ереван, Республика Армения
vahram.mkrtchyan@parliament.am

Аннотация. Рентгеноинтерферометрическим методом исследована анизотропность нематических жидких кристаллов типа 5CB. Определены показатели преломления n_o и n_e и установлено, что нематический жидкий кристалл типа 5CB является рентгенооптически положительной анизотропной средой.

Ключевие слова: Рентгеновский интерферометр, Жидкий кристалл, Показатель преломления, анизотропия:

INVESTIGATION OF THE ANISOTROPY NEMATIC LIQUID CRYSTALS IN X-RAY FREQUENCY RANGE

Mkrtchyan V.P., Gasparyan L.G.

Yerevan State University, Yerevan, Republic of Armenia,
vahram.mkrtchyan@parliament.am

Abstract. In the present work the X-ray optical anisotropy of 5CB type liquid crystals has been investigated based on the method of X-ray interferometry. The specimens were placed directly in the path of one of two interfering beams. In this way Moire fringes have been obtained both in the absence and presence of specimens with different orientations of optical axes. The relative displacement of Moire fringes enabled us to observe and immediately ascertain the presence of X-ray optical anisotropy, to measure the values of refractive indices n_o and n_e for this specimen (n_o is the refractive index for radiation with polarization normal to the principal plain, n_e is that for radiation with polarization in the principal plain parallel to the optical axis). X-ray optical anisotropy of 5CB type liquid crystal was observed using the proposed method and values of refractive indices n_o and n_e for this specimen were measured. It was found out that 5CB type nematic liquid crystal was X-ray anisotropic optically positive medium.

Keywords: X-Ray Interferometry, Liquid Crystal, Refrective Index, Anizotropy.

ՆԵՄԱՏԻԿ ՀԵՂՈՒԿ ԲՅՈՒՐԵՂՆԵՐԻ ԱՆԻԶՈՏՐՈՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ՀԱՃԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Մկրտչյան Վ.Պ., Գասպարյան Լ.Գ.

Երևանի Պետական Համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն,
vahram.mkrtchyan@parliament.am

Համառոտագիր: Աշխատանքում ռենտգենաինտերֆերամետրիական եղանակով հետազոտվել է հեղուկ բյուրեղների անիզոտրոպությունը: Հետազոտվող նմուշը անմիջականորեն տեղադրվում է վերադրվող ինտերֆերենցիոն երկու փնջերից մեկի ճանապարհին: Այս ձևով ստացվել են մուարի գծեր ինչպես նմուշի բացակայության

այնպես էլ առկայության դեպքում: Մուարի շերտերի հարաբերական շեղումը հնարավորություն է տալիս դիտելու ռենտգենաօպտիկական անիզոտրոպությանը և չափելու n_o և n_e բեկման ցուցիչն տվյալ նմուշի համար (n_o – բեկման ցուցիչն է գլխավոր հատույթին ուղղահայաց ուղղությամբ բևեռացված ճառագայթման դեպքում, n_e – բեկման ցուցիչն է գլխավոր հատույթի հարթության մեջ գտնվող և օպտիկական առանցքին զուգահեռ բևեռացված ճառագայթման դեպքում): Առաջարկված մեթոդով գրանցվել է 5CB տիպի նեմատիկ հեղուկ բյուրեղի ռենտգենաօպտիկական անիզոտրոպությունը և չափվել են n_o և n_e բեկման ցուցիչները այս նմուշի համար: Հաստատվել է, որ 5CB տիպի նեմատիկ հեղուկ բյուրեղը հանդիսանում է ռենտգենաօպտիկական անիզոտրոպ դրական միջավայր:

Известно, что диэлектрическая проницаемость анизотропных сред тензорная величина [1], вследствие чего показатель преломления электромагнитных волн в такой среде зависит от их поляризации. Рассмотрим распространение электромагнитных волн в оптически анизотропной одноосной среде. Плоскость, проходящая через нормаль к волновому фронту и оптическую ось, называется главным сечением. Вектор поляризации волны разложим на две составляющие - перпендикулярную и паралелльную к главному сечению. Для составляющей вектора поляризации, перпендикулярной главному сечению, показатель преломления не зависит от угла, образованного нормалью к волновому фронту волны и оптической осью. Однако для составляющей вектора поляризации, лежащей в плоскости главного сечения, показатель преломления является функцией угла, образованного нормалью к волновому фронту и оптической осью. Луч с поляризацией, перпендикулярной главному сечению, называется обыкновенным, а луч с поляризацией, лежащей в плоскости главного сечения, называется необыкновенным лучом.

Для излучения с поляризацией, перпендикулярной главному сечению, показатель преломления обозначается n_o, а для излучения с поляризацией, лежащей в плоскости главного сечения и параллельной оптической оси, показатель преломления обозначается через n_e. Если $n_o > n_e$, то среда называется оптически отрицательной, а при $n_o < n_e$ - положительной.

В оптике проведено множество исследований, связанных с изучением оптической анизотропии. Однако рентгенооптическая анизотропия сред в основном исследована в условиях брэгговского отражения, когда диэлектрическая проницаемость отражающего кристалла рассматривается как тензор. Но эти явления существенны для частот в непосредственной окрестности края поглощения кристалла [2-4]. В работах [5,6] описана рентгенооптическая искусственная анизотропия монокристалла кремния, когда отражающий рентгенооптически изотропный кристалл под влиянием температурного градиента или ультразвука приобретал рентгенооптическую анизотропию. Это выражалось расщеплением максимума кривой отражения на два максимума для σ и π составляющих поляризаций неполяризованного падающего излучения, так как показатели преломления для этих составляющих в искусственно анизотропном кристалле различались.

Цель настоящей работы- исследование рентгенооптической анизотропии в отсутствие брэгговского отражения для некристаллических сред. В качестве такого образца был выбран нематический жидкий кристалл типа 5CB.

Основная схема эксперимента

Для исследования рентгенооптической анизотропии среды необходимо каким-то образом регистрировать разность фаз, возникающую при прохождении через такую среду рентгеновских волн с различными поляризациями. В качестве такого чувствительного прибора можно использовать трехблочный рентгеновский Лауэ интерферометр (LLL интерферометр) [7], состоящий из трех кристаллических блоков (рис.1), отражающие плоскости которых перпендикулярны их поверхностям. Толщина блоков выбрана так, чтобы они удовлетворяли условию бормановского прохождения $\mu t >> 1$, где μ - линейный коэффициент поглощения материала интерферометра, а t - толщина блока. В случае бормановского прохождения при неполяризованном падающем пучке после прохождения через блоки интерферометра остаются только волны σ поляризации, вектор поляризации которых перпендикулярен к плоскости дифракции. Известно, что в рентгеновском интерферометре интерферируют пучки, накладывающиеся на третьем блоке - анализаторе, вследствие чего в двух пучках, выходящих из блока анализатора наблюдаются интерференционные муаровые полосы. Когда нарушается идеальность структур кристаллических блоков, образуются интерференционные картины разного типа, период и расположение которых зависит от типа искажений кристаллической структуры. Обычно различают два типа таких интерференционных картин: дилатационный и ротационный муары. Линии дилатационного муара параллельны отражающим плоскостям и образуются, когда различаются межплоскостные расстояния интерферометрических блоков. Линии ротационного муара перпендикулярны отражающим плоскостям и наблюдаются при существовании взаимных поворотов отражающих плоскостей в интерферометрических блоках.



Рис.1 Ход лучей в LLL интерферометре. *RP* - отражающие плоскости блоков, *SP* - исследуемый образец, *PF* - фотографическая пленка.

Если на пути одного из интерферирующих пучков поставить исследуемый образец (рис.1), то, измеряя смещение линий муара относительно исходного положения, можно определить показатель преломления образца. Этот метод в рентгеновской области частот применялся при исследовании рентгенооптически изотропных сред [8,9].

Основная суть предложенного метода заключается в том, что между блоками интерферометра помещается образец, направление оптической оси которого известно, и рентгеноинтерферометрическим способом проверяется рентгенооптическая анизотропия исследуемого образца, а также оценивается разность показателей преломления $(n_o - n_e)$ в области рентгеновских частот. В этом случае наблюдаемое смещение муаровых полос зависит от взаимного расположения вектора σ поляризации и оптической оси исследуемого образца. Если оптическая ось исследуемого образца перпендикулярна плоскости дифракции и нормали к волновому фронту (**K**) рентгеновской волны, проходящей через образец, то вектор поляризации σ поляризованной волны будет параллелен оптической оси, и волна будет себя вести как необыкновенная волна с показателем преломления n_e (рис.2а). Если образец повернуть на 90 угловых градусов относительно нормали к волновому фронту волны, то оптическая ось образца будет находиться в плоскости дифракции и будет перпендикулярна нормали к волновому фронту, а вектор σ-поляризации будет перпендикулярен главному сечению (рис.2б). Волна будет вести себя как обыкновенная волна с показателем преломления n_o. Следовательно, этим двум случаям будут соответствовать разные смещения муаровых полос по отношению к муару, полученному без образца. По разности этих смещений можно наблюдать рентгенооптическую анизотропию данного образца и оценивать разность ($n_o - n_e$).



Рис.2. (а) – ось анизотропии перпендикулярна плоскости дифракции, (б) - ось анизотропии лежит в плоскости дифракции.

Сравнивая полученные муары в трех вариантах (без образца и с образцом для двух случаев ориентации его оптической оси), можно определить, является ли образец рентгенооптически анизотропным или нет. Если образец рентгенооптически анизотропен, то смещения максимумов муаровых полос при разной ориентации предполагаемой оптической оси будут различными. Измеряя смещение максимумов муаровоых полос для двух разных ориентаций оптической оси по отношению к максимумам муаровой картины без образца, можно определить значения показателей преломления n_o и n_e, а также их разность ($n_o - n_e$).

Результаты эксперимента

В качестве исследуемого образца использовали нематический жидкий кристалл типа 5CB, который в области оптических частот является одноосной анизотропной средой.

Для проведения эксперимента был изготовлен планарный капилляр, состоящий из двух стеклянных прозрачных пластин (подложек) толщиной 150 мкм, расстояние между которыми с учетом прокладок составляло 40 мкм. Затем это пространство заполнялось нематическим жидким кристаллом (НЖК) типа 5CB. Поверхности стеклянных подложек заранее были очищены и обработаны методом натирки, что обеспечивало равномерную планарную ориентацию молекул НЖК, при которой длинная ось молекул (молекулы имеют форму стержня длиной 20А, шириной 5А) была параллельна поверхности подложек, то есть направление директора ***n*** совпадало с оптической осью (рис.3).



Рис.3. Схема образца.

В эксперименте использовался рентгеновский трехблочный (LLL) интерферометр, изготовленный из бездислокационного кристалла кремния с отражающими плоскостями (110) для $MoK\alpha$ излучения, с помощью которого получены муаровые полосы с образцом и без образца.

Сначала от интерферометра получены муары с планарным капилляром без жидкого кристалла (рис.4б), далее - с исследуемым образцом (жидким кристаллом) при двух различных направлениях оптических осей: перпендикулярно (рис.4а) и параллельно (рис.4в) главному сечению.

Сопоставляя полученные муары, наблюдаем смещение муаровых полос.



(а) (б) (в)

Рис.4 . Муаровые картины: (а) – ось анизотропии перпендикулярна плоскости дифракции (показатель преломления n_e), (б) - в отсутствие образца, (в) ось анизотропии лежит в плоскости дифракции (показатель преломления n_o).

С целью оценки анизотропии жидкого кристалла были получны муаровые картины для трех случаев – без образца (рис.4б) и с образцом для двух ориентаций его оптической оси (рис.4а и 4в). На каждой из муаровых картин сравнивая относительное смещение максимумов, можно утверждать, что жидкий кристалл является рентгенооптически анизотропной средой.

Левая колонка (рис.4а) содержит муар от образца с оптической осью, перпендикулярной плоскости дифракции (муар необыкновенной волны, показатель преломления n_e). Правая колонка (рис.4в) содержит муар обыкновенной волны (оптическая ось жидкого кристталла лежит в плоскости дифракции, показатель преломления n_o).

Среднее значение периода муаровых полос равно 750 мкм. Периоды муаровых полос после внесения образцов почти не изменялись, что свидетельствует об однородности используемых образцов. Средняя толщина образца t=40мкм. Из рисунка 4 видно, что муаровые полосы в левой (рис.4а) и в правой колонках (рис.4в) сместились относительно муаровых полос средней колонки (рис.4б- без образца) вверх на разные величины (например, 4-ая линия) что означает, что жидкий кристалл типа 5СВ оптически анизотропен в области рентгеновских частот. В средней колонке (рис.4б) линия 1 почти не видна, а на левой колонке муаровые полосы сместились вверх и линия 1 уже просматривается. В правой колонке (рис.4в) муаровые полосы также сместились вверх, и в результате - линия 1 видна еще лучше. По фотометрическим кривым были измерены расстояния между максимумами с точностью 10 мкм.



(а)



(б)



(в)

Рис.5. Компьютерные фотометрические кривые муаров полученные от фотопленки, приведенной на рис.4. а) муар, полученный от образца, оптическая ось которого перпендикулярна плоскости дифракции (показатель преломления n_e), б) муар без образца, в) муар, полученный от образца, оптическая ось которого лежит в плоскости дифракции (показатель преломления n_o). В каждой колонке за единицу интенсивности принято максимальное значение интенсивности I_{max} на фотометрической кривой данной колонки.

Для муара, полученного от образца с оптической осью, перпендикулярной плоскости дифракции, (фотометрическая кривая "а" на рис.5) смещение максимумов относительно исходного муара (фотометрическая кривая "в" на рис.5) составляло $0.35mm$, а для муара, соответствующего снимку с оптической осью, лежащей в плоскости дифракции (фотометрическая кривая "б" на рис.5), смещение составляло $0.57mm$.

С помощью формул (4) и (6), приведенных в работе [10], были вычислены средние значения декрементов $\bar{\delta}_e = 8.16\cdot 10^{-7}$, $\bar{\delta}_o = 1.33\cdot 10^{-6}$.

Таким образом, $(\bar{\delta}_o - \bar{\delta}_e) = 5.14\cdot 10^{-7}$, т.е. разность средних значений показателей преломления будет равна $(\bar{n}_o - \bar{n}_e) = -5.14\cdot 10^{-7}$. Следовательно, нематический жидкий кристалл типа 5CB является рентгенооптической положительной одноосной анизотропной средой.

Заключение

1 Таким образом, в основе рентгеноинтерферометрического способа изучения рентгенооптических анизотропных свойств материалов лежит определение показателя преломления исследуемого образца, установленного на пути интерферирующих в интерферометре пучков, при различных ориентациях его оптической оси. В зависимости от ориентации оптической оси смещения муаровых полос по отношению к положению этих полос без исследуемого образца различные. Следовательно, измерив смещение полос для данной ориентации оптической оси образца, можно определить соответствующие показатели преломления n_o и n_e.

2 Измерение значений показателей преломления n_o и n_e по полученной муаровой картине для жидкого кристалла 5CB в области рентгеновских частот ($MoK\alpha$ излучение) показало, что $(n_o - n_e) < 0$, т.е. жидкий кристалл является рентгенооптически одноосной положительной анизотропной средой

Литература

1. Борн М., Вольф Э., Основы Оптики, М.: Наука, 1970, 855 с.
2. Чжан Ш., Многоволновая дифракция рентгеновских лучей в кристаллах, М.: Мир, 1984, 284 с.
3. Dmitrienko V.E., “Anisotropy of X-ray susceptibility and Bragg reflections in cubic crystals”, Acta Cryst, A40, 1984, p.89-95.
4. Dmitrienko, V. E., Ishida, K., Kirfel, A. and Ovchinnikova, E. N., “Polarization anisotropy of X-ray atomic factors and `forbidden' resonant reflections”, Acta Cryst., A**61**, 2005, p.481-493.
5. Гаспарян Л.Г., Мкртчян В.П., Балян М.К., Григорян А.Г., «Температурная искусственная анизотропия кристаллов в области рентгеновских частот», Известия НАН РА, Физика, Т41, N5, 2006, ст..374- 378.
6. Гаспарян Л.Г., Мкртчян В.П., Балян М.К., Мелконян А.С., «Искусственная ультразвуковая анизотропия кристаллов в области рентгеновских частот». Известия НАН РА, Физика, Т42, N4, 2007, ст. 242-249..
7. Bonse U., Hart M., “Moire patterns of atomic planes obtained by X-ray interferometry”, Z.Physik, 190, 1966, p.455-467.
8. Пинскер З.Г., Рентгеновская кристаллооптика, М.: Наука, 1982, 390 с.
9. Momose, A., “Demonstration of phase-contrast X-ray computed tomography using an X-ray interferometer”, Nucl. Instrum. and Meth. in Phys. Res., A 352, 1995, p.622-628.
10. Мкртчян В.П., Гаспарян. Л.Г., Балян М.К. “Исследование рентгенооптической анизотропии материалов рентгеноинтерферометрическим методом”, Заводская лаборатория. Диагностика материалов. 76(11), 27 (2010).

Статья была представлена во время работ в 3-ей секции.

ГУМАНИСТИЧЕСКАЯ НАПРАВЛЕННОСТЬ УЧИТЕЛЯ КАК ВАЖНЫЙ КОМПОНЕНТ ОБРАЗОВАНИЯ

Мхитарян А.М.

Государственный педагогический университет имени Хачатура Абовяна, Ереван, Республика Армения, mkhitaryanarmenuhi@mail.ru

իսկ C-ն հաստատուն է, որը կախված չէ x-ից: Նկատենք, որ եթե g(x)-ը բավարարում է (A_1) պայմանին, ապա այն բավարարում է Մակենհաուպտի ցանկացած (A_p), $1<p<\infty$ պայմանին, այսինքն

$$\sup_I\left(\frac{1}{|I|}\int_I g(t)dt\right)\left(\frac{1}{|I|}\int_I\left(g(t)\right)^{\frac{-1}{p-1}}dt\right)^{p-1}<\infty \qquad (A_p)$$

(տես [4]): Այժմ ենթադրենք ρ կշռային ֆունկցիան ունի (3) տեսքը, որտեղ ρ_1-ը բավարարում է (A_1) պայմանին:

Դիցուք

$$B(z)=\prod_{k=1}^{\infty}\frac{z_k-z}{\overline{z_k}-z}\frac{\left|1+z_k^2\right|}{1+z_k^2}$$

Բլյաշկեի արտադրյալն է, ենթադրելով, որ z_k կետերը զույգ առ զույգ իրարից տարբեր են: Դիցուք $n_p=\left[\frac{\alpha+1}{p}\right]$, $\tilde{\rho}_p(t)=|t+i|^{p-pn_p}\rho_1(t)$: Երբ $\frac{\alpha+1}{p}$ ամբողջ թիվ է մենք կենթադրենք, որ $\inf\limits_{t\in(-\infty;+\infty)}\rho_1(t)>0$: Տեղի ունի հետևյալ պնդումը.

Լեմ 1: Դիցուք $f\in H^p(\rho)$: Տեղի ունի հետևյալ ներկայացումը

$$f(z)=\frac{(z+i)^{\frac{\alpha}{2}}}{2\pi i}\int_{-\infty}^{+\infty}\frac{f(t)}{(t+i)^{\frac{\alpha}{2}}}\frac{dt}{t-z} \qquad (4)$$

Ապացույց: $H^p(\rho)$ դասի սահմանումից և $\rho_1(t)$ ֆունկցիայի հատկություններից հետևում է, որ $f(z)(z+i)^{-\frac{\alpha}{p}}\in H^p(H^+)$ հետևաբար

$$(z+i)^{-\frac{\alpha}{2}}f(z)=\frac{1}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}\frac{f(t)}{(t+i)^{\frac{\alpha}{2}}}\frac{dt}{t-z},$$

որտեղից ստանում ենք (4) ներկայացումը:

3. Դիտարկենք ռացիոնալ ֆունկցիաների համակարգերը

$$r_k(z)=\frac{y}{(z+i)^{n_p}\left(z-\overline{z_k}\right)},\quad k=1,2,... \qquad (5)$$

$$\Omega_k(z)=\frac{(z-i)^{n_p}B(z)}{(z-z_k)B'(z_k)}\,,\quad k=1,2,... \tag{6}$$

$$\Omega_{nk}(z)=\frac{(z-i)^{n_p}B_n(z)}{(z-z_k)B_n^{'}(z_k)}\,,\quad k=1,2,...,n \tag{7}$$

Տեղի ունի հետևյալ պնդումները, որոնք ոչ կշռային դասերում ապացուցվել է [5] աշխատանքում:

Լեմ 2: $\{r_k(z)\}_1^n$ և $\{\Omega_{nk}(z)\}_1^n$ համակարգերը, ինչպես նաև $\{r_k(z)\}_1^\infty$ և $\{\Omega_k(z)\}_1^\infty$ համակարգերը բիօրթոգոնալ են ամբողջ թվային ուղղի վրա

$$-\frac{1}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}r_j(t)\overline{\Omega_{nk}(t)}\,dt=\frac{1}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}\overline{r_j(t)}\Omega_k(t)\,dt=\delta_{jk}\;,\quad (1\le k,\ j\le n\le\infty)$$

Ապացույց: Նկատենք, որ

$$-\frac{1}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}r_j(t)\overline{\Omega_{nk}(t)}\,dt=\frac{1}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}\frac{\overline{B_n(t)}}{(t-z_j)(t-\overline{z_k})\overline{B_n^{'}(z_k)}}\,dt=\delta_{jk}$$

Լեմը ապացուցված է:

Լեմ 3: Տեղի ունի հետևյալ հավասարությունը

$$\left(\frac{\overline{\xi}-i}{z+i}\right)^{n_p}\frac{1}{\overline{\xi}-z}=-\sum_{k=1}^{n}\overline{\Omega_{nk}(\xi)}\,r_k(z)+\frac{\overline{B_n(\xi)}\,B_n(z)}{\overline{\xi}-z}=\sum_{k=1}^{n}\Omega_{nk}(z)\,\overline{r_k(\xi)}+\frac{\overline{B_n(\xi)}\,B_n(z)}{\overline{\xi}-z}$$

$\forall\, z,\xi$ փոփոխականների համար:

Ապացույց: [3] աշխատանքում ապացուցվել է

$$\frac{1}{\overline{\xi}-z}=-\sum_{k=1}^{n}\overline{\Omega_{nk}(\xi)}\,r_k(z)+\frac{\overline{B_n(\xi)}\,B_n(z)}{\overline{\xi}-z}$$

Հավասարությունը այն դեպքում, երբ $\rho\equiv 1$: Այս հավասարության երկու կողմերը բազմապատկելով $\left((\overline{\xi}-i)(z+i)^{-1}\right)^{n_p}$ արտադրիչով ստանում ենք լեմի ապացույցը:

4. Նշանակենք $H^p(\rho,Z)$ $\{r_k(z)\}_1^n$ համակարգի գծային թաղանթի փակույթը $H^p(\rho)$ տարածությունում: Տեղի ունի հետևյալ պնդումը.

Թեորեմ 1: $f\in H^p(\rho)$ ֆունկցիան պատկանում է $H^p(\rho,Z)$ դասին այն և միայն այն դեպքում, երբ

$$\int_{-\infty}^{\infty}\frac{f(t)}{B(t)(t+i)^{n_p}}\frac{dt}{t-z}=0\,,\quad z\in\Pi^+ \tag{8}$$

Ապացույց: Դիցուք $f(z)=r_k(z)$: Այդ դեպքում ստանում ենք

$$\int_{-\infty}^{\infty}\frac{f(t)}{B(t)(t-\overline{z_k})^{s_k}}\frac{dt}{t-z}=0\,,\quad z\in\Pi^+$$

քանի որ $\left(B(\xi)(\xi-\overline{z_k})^{s_k}\right)^{-1}\in H^p(\Pi^-)$: Այսինքն (8) հավասարությունը տեղի ունի ցանկացած $f(z)=r_k(z)$ ֆունկցիայի համար: Հետևաբար այն տեղի ունի նաև ցանկացած $f\in H^p(\rho,Z)$ ֆունկցիայի համար: Այժմ ենթադրենք $f\in H^p(\rho)$ բավարարում է (8) պայմանին: Այդ դեպքում

$$f(z)=\frac{(z+i)^{n_p}}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}\frac{f(t)}{(t+i)^{n_p}}\frac{dt}{t-z}\,,\quad z\in\Pi^+$$

Ըստ լեմ 3-ի ստանում ենք՝

$$f(z)=-\frac{(z+i)^{n_p}}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}\frac{f(t)}{(t+i)^{n_p}}\left(\sum_{k=1}^{n}\overline{\Omega_{nk}(t)}\,r_k(z)+\frac{\overline{B_n(t)}\,B_n(z)}{t-z}\right)dt=$$

$$=\sum_{k=1}^{n}c_{nk}(f)\,r_k(z)+\frac{(z+i)^{n_p}}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}\frac{f(t)}{(t+i)^{n_p}}\,\frac{\overline{B_n(t)}\,B_n(z)}{t-z}\,dt\,,$$

որտեղ $c_{nk}(f)=\dfrac{1}{2\pi i}\displaystyle\int_{-\infty}^{\infty}f(t)\overline{\Omega_{nk}(t)}\,dt$

Քանի որ $\overline{B_n(t)}=(B_n(t))^{-1}$, ապա կստանանք՝

$$f(z)=\sum_{k=1}^{n}c_{nk}(f)\,r_k(z)+\frac{(z+i)^{n_p}}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}\frac{f(t)}{(t+i)^{n_p}}\,\frac{B_n(z)}{B_n(t)(t-z)}\,dt$$

Անցնելով սահմանի, երբ $n\to\infty$ և հաշվի առնելով, որ

$$\frac{f(t)}{(t+i)^{n_p}B_n(t)}\to\frac{f(t)}{(t+i)^{n_p}B(t)}$$

ըստ $L^p(-\infty,\infty)$ տարածության նորմայի, ըստ (8)-ի ստանում ենք

$$\sum_{k=1}^{n}c_{nk}(f)\,r_k(z)\to f$$

$L^p(-\infty,\infty)$ տարածության նորմայով: Այսպիսով $f\in H^p(\rho,Z)$: Դիցուք $f\in H^p(\rho)$: Նշանակենք

$$f_B(z)=\frac{(z+i)^{n_p}}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}\frac{f(t)}{(t+i)^{n_p}}\,\frac{B_n(z)}{B_n(t)(t-z)}\,dt$$

և նկատենք, որ f_B ֆունկցիան բավարարում է (8) պայմանին: Այսպիսով ցանկացած $f\in H^p(\rho)$ ֆունկցիա կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$f(z)=f_B(z)+B(z)\,f_1(z)\,,\quad f_1\in H^p(\rho)$$

հետևաբար

$$H_+^p(\rho)=H_+^p(\rho,Z)\oplus B\,H_+^p(\rho)$$

նմանապես

$$H_+^p(\rho)=H_+^p(\rho,Z_n)\oplus B_n\,H_+^p(\rho)$$

5. Թեորեմ 2: Դիցուք $Z=\{z_k\}_1^{\infty}$ հաջորդականությունը բավարարում է (2) պայմանին, $\rho(x)=(1+|x|)^{-\alpha}\rho_1(x)$, որտեղ $\rho_1(x)$-ը դանդաղ փոփոխվող ֆունկցիա է անվերջ հեռու կետում: Տեղի ունի

ա) Ցանկացած $f\in H_+^p(\rho)$, $(p>1)$ ֆունկցիայի համար

$$\sum_{k=1}^{\infty}|f(z_k)|^p\,|i+z_k|^{p\,n_p}\,|F_\rho(z_k)|^p\,\frac{y_k}{1+|z_k|^2}<C\|f\|_{H_+^p(\rho)}\,,$$

որտեղ C-ն հաստատուն է, որը կախված չէ f-ից, իսկ

$$F_\rho(z)=\exp\left\{\frac{1}{2\pi i}\int_{-\infty}^{\infty}\ln\left(\tilde{\rho}_p^{\frac{1}{p}}(t)\right)\frac{dt}{t-z}\right\}$$

բ) Ցանկացած $\{w_k\}_1^{\infty}$ հաջորդականության համար, այնպես որ

$$\sum_{k=1}^{\infty}|w_k|^p\,|i+z_k|^{p\,n_p}\,|F_\rho(z_k)|^p\,\frac{y_k}{1+|z_k|^2}<\infty$$

գոյություն ունի $f \in H_+^p(\rho)$, այնպես որ $f(z_k) = w_k$, $k = 1,2,...$:

Ապացույց: Քանի որ $f \in H_+^p(\rho)$, ապա $(z+i)^{n_p} f(z) \in H_+^p(\tilde{\rho}_p)$: Ընդ որում

$$\int_{-\infty}^{\infty} |f(x+iy)|^p |x+iy|^{pn_p} \tilde{\rho}_p(t)\, dt \le C \left\| (t+i)^{n_p} f(t) \right\|_{L^p(\tilde{\rho}_p)}$$

Նկատենք, որ $(z+i)^{n_p} f(z) F_\rho(z) \in H_+^p(\Pi^+)$: Իրոք կիրառելով Յենսենի անհավասարությունը ստանում ենք՝

$$\int_{-\infty}^{\infty} |f(x+iy)|^p |x+iy|^{pn_p} |F_\rho(x+iy)|^p\, dx \le \int_{-\infty}^{\infty} |f(x+iy)|^p |x+iy|^{pn_p} \left(\int_{-\infty}^{\infty} (\tilde{\rho}(t))^{\frac{1}{p}} \frac{y\,dx}{t^2+y^2} \right) dt$$

Քանի որ (տես [4])

$$\int_{\infty}^{\infty} (\tilde{\rho}(t))^{\frac{1}{p}} \frac{y\,dt}{t^2+y^2} \le C \left(M\, \tilde{\rho}_p^{\frac{1}{p}} \right)(t)$$

որտեղ C-ն հաստատուն է անկախ y-ից, իսկ M-ը $\tilde{\rho}_p^{\frac{1}{p}}$ ֆունկցիայի մաքսիմալ ֆունկցիան է: Հետևաբար կստանանք

$$\int_{-\infty}^{\infty} |f(x+iy)|^p |x+iy|^{pn_p} |F_\rho(x+iy)|^p\, dx \le C \int_{-\infty}^{\infty} |f(x+iy)|^p |x+iy|^{pn_p} \tilde{\rho}_p^{\frac{1}{p}}(x)\, dx = C \|f\|_{L^p(\rho)}$$

և $f(z)\, z\, F_\rho(z) \in H_+^p(\Pi^+)$: Այժմ, եթե Z հաջորդականությունը բավարարում է (1) պայմանին, ապա ստանում ենք՝

$$\sum_{k=1}^{\infty} |f(z_k)|^p |i+z_k|^{pn_p} |F_\rho(z_k)|^p \frac{y_k}{1+|z_k|^2} < C \left\| (z+i)^{n_p} f(z) F_\rho(z) \right\|_{H_+^p} \le C \|f\|_{L^p(\rho)}$$

Այսպիսով ստացանք ա) պնդման ապացույցը: Այժմ ենթադրենք $\{w_k\}_1^\infty$ հաջորդականությունը բավարարում է թեորեմի պայմանին: Այդ դեպքում $\{w_k (i+z_k)^{n_p} F_\rho(z_k)\}_1^\infty \in l^p(Z)$ և հետևաբար գոյություն ունի $f \in H^p(\Pi^+)$ այնպես, որ

$$f(z_k) = w_k (i+z_k)^{n_p} F_\rho(z_k), \quad k = 1,2,...$$

Քանի որ $\tilde{\rho}_p(t) \in A_1$, ստանում ենք $F(z) = (i+z)^{n_p} f(z) (F_\rho(z))^{-1} \in H_+^p(\rho)$ և $F(z_k) = w_k$, $k = 1,2,...$: Թեորեմը ապացուցվեց:

Ամփոփում

Այս աշխատանքում դիտարկվում է ազատ ինտերպոլիացիայի խնդիրը Հարդիի կշռային տարածություններում: Դիցուք $H_+^p(\rho)$-ն $\rho(x) = (1+|x|)^{-\alpha} \rho_1(x)$ $(\alpha \ge 0)$ կշռով Հարդիի տարածությունն է, որտեղ $\rho_1(x)$ ֆունկցիան բավարարում է Մակենհաուպտի պայմանին: Ապացուցվում է, որ ցանկացած $f \in H_+^p(\rho)$ ֆունկցիայի համար տեղի ունի՝

$$\sum_{k=1}^{\infty} |f(z_k)|^p |i+z_k|^{pn_p} |F_\rho(z_k)|^p \frac{y_k}{1+|z_k|^2} \le C \|f\|_{H_+^p(\rho)},$$

որտեղ C-ն հաստատուն է անկախ f-ից, $n_p = \left[\frac{\alpha+1}{p} \right]$, $F_\rho(z) = \exp\left\{ \frac{1}{2\pi i} \int_{-\infty}^{\infty} \ln\left(\tilde{\rho}_p^{\frac{1}{p}}(t) \right) \frac{dt}{t-z} \right\}$:

Ապացուցվում է նաև հակառակ պնդումը: Յանկացած $\{w_k\}_1^\infty$ հաջորդականության համար, որը բավարարում է հետևյալ պայմանին՝ $\sum_{k=1}^{\infty} |w_k|^p |i+z_k|^{pn_p} |F_\rho(z_k)|^p \frac{y_k}{1+|z_k|^2} < \infty$, գոյություն ունի $f \in H_+^p(\rho)$ այնպես, որ $f(z_k) = w_k$, $k = 1,2,...$: Նշենք, որ այս խնդիրը, ինչպես նաև բազմապատիկ ինտերպոլիացիայի խնդիրը արդեն ուսումնասիրված են, սակայն ոչ կշռային տարածություններում:

Գրականություն

1. L.Carleson, «Interpoltion by bounded analytic Functions and the Corona Problem», Ann. Math., 76 (3) 547-559 (1962).
2. H.S. Shapiro, A.L. Shilds, «On Some Interpolation Problems for Analitic Functions», Amer. J. Math. 83 (3) 513-532 (1961).
3. М. М. Джрбашян "Биортогональные системы и решение интерполяционной задачи с узлами ограниченной кратности в классе H^2" Изв. АН ССР., сер. Мат., 9(5) 339-373, (1974)
4. Дж. Гарнет, Ограниченные аналитические функции. Москва. "Мир" 1984.
5. Г.М. Айрапетян, "Кратная интерполяция и базисность некоторых биортогональных систем рациональных функций в классах H^p". Изв. АН Арм. ССР., сер. Мат., 12 (4) 262-277, (1977).
6. В.Б. Дыбин, "Кратная интерполяция в весовых классах Харди и регуляризация расходящих интегралов". Известия АН Армении, XXV, N3 , 236-260, 1990.

Статья была представлена во время работ в 2-ой секции.

О РАЗВИТИИ ТВОРЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ ПРИ ОБУЧЕНИИ ХИМИИ В ШКОЛАХ

Паликян Г.У.

Центр оценки и тестирования,Ереван, Республика Армения,
palikyan@mail.ru

Аннотация. В статье обсуждены вопросы развития творческого мышления учащихся при обучении химии в школах РА. На основе анализа тестов, примененных в основных школах РА в рамках национальных смотров-исследований по естественнонаучным дисциплинам, показана необходимость применения заданий, способствующих развитию творческого мышления учащихся на уроках химии.

Ключевые слова: творческое мышление, решение нестандартных задач по химии, национальные смотры по естественнонаучным дисциплинам

ON THE DEVELOPMENT OF CREATIVE THINKING OF PUPILS IN TEACHING CHEMISTRY AT SCHOOLS

Palikyan G.U.

Assessment and Testing Center, Yerevan, Republic of Armenia,
palikyan@mail.ru

Abstract. The issues of the development of creative thinking of pupils in teaching Chemistry at schools of RA is discussed in this article. Based on the analyses of the national reviewed tests on Science subjects passed at schools of RA shows the necessity of using the assignments for developing the creative thinking of pupils in Chemistry lessons.

Key words. Creative thinking, solving non-standard issues on Chemistry, national review on Science subjects.

Одним из основных направлений модернизации современного образования является сочетание глобальных образовательных задач и национальных особенностей развития. С этой целью были предложены многочисленные модели, обуславливающие улучшение качества образования и включающие переход к компетентностной модели образования [1].

Отметим, что из факторов, способствующих повышению уровня образования, следует выделить систематическое, контролируемое и способствующие саморазвитию улучшение условий обучения [2,3]. Основополагающим в решении этой проблемы является формирование личности с нестандартным мышлением, готовой к саморазвитию и непрерыному образованию, способной к решению разнопрофильных творческих задач на основе собственных исследований [4].

В этом направлении важную роль играют международные смотры-исследования достижений учащихся, которые направлены на выявление и сравнение уровней и качества образования в различных национальных системах по единой тестовой технологии. С 2003 года международное мониторинговое исследование качества школьного математического и естественнонаучного образования TIMSS проводятся и в образовательных учреждениях РА. Следует отметить, что исследования проводятся циклично – раз в четыре года в 4-х и 8-х классах [5].

В последние годы в образовательных учреждениях РА проводятся и национальные смотры-исследования по естественнонаучным дисциплинам и математике[6]. Так, тесты по химии, физике, географии и математике, апробированные в 2011-2015 годах, были составлены на основе национальных образовательных стандартов и предметных программ, однако отличались структурными особенностями, целью которых была проверка общего уровня развития обучаемых.

В тесты были включены темы, содержащие информацию, которую можно получить не только из учебников, но и вследствие участия во внеклассных и внешкольных мероприятиях. Немаловажную роль играет и желание обучаемых к саморазвитию и самообразованию.

Тесты, применяемые в ходе смотров, содержали текстовый фрагмент, иллюстрации, схемы, таблицы и были направлены на проверку способности обучаемых к самостоятельному мышлению и воображению, компетенций по применению прикладных знаний, а также умения решать нестандартные задачи. Другой целью смотров была проверка способности решения учениками ситуационных проблем, часто возникающих в реальной жизни.

В первую часть тестов по естественнонаучным дисциплинам, апробированным в 8 классе, были включены задания по химии, во вторую часть - по физике. Тесты состояли из следующих типовых заданий:

- с выбором одного правильного ответа;
- с краткими и развернутыми ответами;
- с двумя подпунктами.

Последний тип заданий содержал вопрос на проверку самостоятельного творческого мышления и был интересен с точки зрения восприятия учеником предложенной реальной ситуации.

Целью данной работы является анализ заданий, апробированных в соответствующих национальных смотрах-исследованиях. В ходе анализа можно было убедиться в необходимости применения заданий, способствующих развитию творческого мышления на уроках химии. Из заданий национальных смотров-исследований, предложенных в 8 классе, особый интерес представляли задания с краткими и развернутыми ответами, а также задания с двумя подпунктами. Исследования показали, что с первой частью заданий с двумя подпунктами учащиеся в какой-то мере справились. Однако, вторую часть заданий с двумя подпунктами они или неправильно решили, или вовсе не смогли сориентироваться.

Приведем несколько примеров.

1. На вопрос как изменится количество соли в растворе, если к раствору с определенной массой соли прибавить воду, большинство учеников ответило, что уменьшится, и обосновало свой ответ тем, что соленость уменьшится. Налицо явная ошибка: ученики перепутали количество вещества со вкусом (концентрацией). По всей вероятности, учащиеся или не знакомы с этим типом заданий, или при преподавании этой темы у них возник некий стереотип мышления, препятствующий творческому восприятию вопроса.
2. Учениками не был дан полный ответ на следующий экспериментальный вопрос с элементами креативности об отделении растворенного вещества из соответствующих водных растворов:

   Пример 1. Ученики поспорили о том, можно ли приведенным на картине способом выделить соль из водного раствора соли. Карен считал, что можно, а Армен не был с ним согласен. С кем из учеников согласен ты?

   

   ☐ *с Арменом*

   ☐ *с Кареном*

   Обоснуй свой ответ: ___________________

3. С вопросом о физических и химических явлениях с выбором одного правильного ответа и обоснованием своего выбора ученики в основном не справились. Даже те

немногие из них, выбравшие правильный вариант ответа, или не смогли правильно обосновать свой выбор, или не сочли нужным ответить на предложенный творческий вопрос.

Пример 2. Явления бывают физические и химические.
А. Какое из приведенных явлений является физическим?

1. испарение росы
2. горение спички
3. ржавление железа
4. превращение вина в уксус

Б. Обоснуй свой ответ.

4. С заданиями с выборочным ответом по проверке знаний по теме <<Агрегатное состояние вещества>> учащиеся в основном справились, в то время как на вопросы по теме <<Простые и сложные вещества. Смеси>> не смогли ответить.

5. У учеников возникли затруднения и с вопросами о химической связи.
Пример 3. Во время практической работы группе учеников было задано выбрать формулы соединений с полярной ковалентной связью

$NaCl$, FeO, NH_3, P_2O_5, Al_2O_3

В каком из рядов приведены эти формулы?

1. $NaCl$, FeO,
2. NH_3, P_2O_5,
3. P_2O_5, Al_2O_3
4. Al_2O_3, NH_3

6. На различные вопросы о свойствах веществ ученики ответили также не очень удовлетворительно.
Пример 4. Во время приготовления теста на судочках с пищевой содой и солью не оказалось надписей. Каким из применяемых в быту веществ можно распознать соль и соду?

1 *вода*

2 *сахар*

3 *уксус*

4 *спирт*

7. Задания на выявление умений учеников составлять химические реакции и классифицировать их также не были выполены.

Пример 5. На лабораторном столе находятся склянки со следующими веществами HCl, MgO и Cu. Каково максимальное число новых веществ, полученных при их взаимодействии?
Пример 6. На каждом из приведенных кубиков написана формула вещества.



Используя 4 кубика и знаки « + » и « = » составь уравнение реакции замещения.
Уравнение составленной тобой реакции ___________________

Пример 7. За ночь дрова, находящаяся в печи, догорели и осталась одна лишь зола. На следующий день попытались заново разжечь огонь в печи без добавления новых дров, но - безрезультатно. Объясните причину.

Ответ вызвал удивление, он гласил: «*Заново разжечь огонь в печи не удалось,так как уголь не горит*». Налицо явная ошибка: ученики перепутали золу и уголь. Отметим, что на вышеприведенное задание ученики в основном дали один и тот же неверный ответ.

Таким образом, проведение национальных смотров-исследований по естественнонаучным дисциплинам и анализ их результатов показали, что ученики затрудняются понимать даже небольшой химический текст, не обучены четко отвечть на заданные вопросы и комментировать данную химическую информацию, не способны составлять химические формулы и распознавать физические и химические явления, протекающие в природе.

Можно предположить, что у обучаемых формируются некие стереотипы мышления, а у учителей нет навыков организации их переосмысления и творческого применения знаний, навыков и умений. Смотры показали, что даже ученики, имеющие необходимый уровень знаний, плохо выполняют предложенные задания, так как или не усваивают их смысл, или психологически не готовы к творческому мышлению при выполнении заданий.

Литература

1. Государственная программа развития образования в 2011-2015г. Республики Армения 9 с., http://www.parliament.am/law_docs/190711HO246havelvats.pdf
2. Зиновкин М.М., Гареев Р.Т., Горев П.М., Утемов В.В. Научное творчество. Инновационные методы в системе многоуровневого непрерывного креативного образования НФТМ-ТРИЗ, 10 с. Киров, 2013
3. Утёмов В. В., Горев П. М., Зиновкина М. М., Педагогика креативности. Прикладной курс научного творчества. Учебное пособие, Киров: АНОО «Межрегиональный ЦИТО», 2013, 17с.
4. Оржековский П.А. Формирование у учащихся опыта творческой деятельности при обучении химии. М., ИОСО РАО, 1997, 121с.

5. Michael O. Martin, Ina V.S. Mullis, Pierre Foy, and Gabrielle M. Stanco TIMSS 2011 International Results in Science. TIMSS&PIRLS International Study Center, Lynch School of Education, Boston College, 2012
6. A. Baghdasaryan, L Atoyan: Armenia.//TIMSS 2011Encyclopedia: Education Policy and Curriculum in Mathematics and Science, Volume 1, Edited by Ina V.S. Mullis, Michael O.Martin, Chad A. Minnich, Gabrielle M. Stanco, Alka Arora, Victoria A.S. Centurino and Courtney E. Castle , TIMSS&PIRLS International Study Center, Lynch School of Education, Boston College, 2012, pp 97-105

Статья была представлена во время работ в 6-ой секции.

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Պապիկյան Ծ.Ռ.

Կրթության և գիտության նախարարություն, Երևան, Հայաստանի Հանրապետություն, papikyantsovinar@gmail.com

ОБ ОДНОМ ПРОЕКТЕ ИССЛЕДОВАНИЯ МЕЖКУЛЬТУРНЫХ ВЗАИМОСВЯЗЕЙ В ОБЛАСТИ ОБРАЗОВАНИИ РОССИИ И АРМЕНИИ

Папикян Ц.Р.

Министерство образования и науки РА, Ереван, Республика Армения, papikyantsovinar@gmail.com

Аннотация. В статье говорится о целесообразности проекта исследований межкультурных связей в области образовании Армении и России в начале 1900-х годов до конца 1930-х. Представлены пункты программы исследожания, проведены параллели между системами образования Армении и России в данный период.

Ключевые слова: реформы, образовательная система, новая школа, педогогические направления.

Abstract. The expedience of intercultural relations research project of Armenia and Russia in the sphere of education from the beginning of 1900s until 1930s is discussed in the following article. The points of the research project are represented; parallels between educational systems of Armenia and Russia of the given period are drawn.

Key words: reforms, educational system, new school, pedagogy direction.

Մանկավարժական հետազոտության իմ ներկայիս փուլը ընդգրկում է XX դարի սկզբից մինչև 1930-ական թվականների վերջն ընկած ժամանակահատվածում հանրակրթական հաստատությունների և ընդհանրապես հանրակրթության գոյություն ունեցող վիճակը, դերն ու նշանակությունը Ռուսաստանում և Հայաստանում: Կներկայացնեմ այդ հետազոտության նախագիծը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանը նպատակահարմար եմ գտել բաժանել երեք հատվածների՝ 1900-1917 թթ., 1917-20 թթ. և 1921-30-ական թթ. վերջը:

Ժամանակաշրջանի՝ վերոնշյալ հատվածների բաժանելը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Մինչև 1917 թվականը Արևելյան Հայաստանը գտնվում էր Ռուսաստանի կազմում, հետևաբար՝ մշակույթը, կրթական համակարգը սերտորեն առնչվում էին, անդրադարձնում էին Ռուսաստանի մշակույթի ու կրթական համակարգի փոփոխությունները, և բնականաբար ճիշտ կլինի 1900 – 1917 թթ. ընկած ժամանակաշրջանը քննարկել և զուգահեռներ անցկացնել՝ համեմատելով Ռուսաստանի նույն ժամանակաշրջանի զարգացումների հետ:
- 1918-20 թվականներին Արևելյան Հայաստանի տարածքում կազմավորվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը: Ռուսաստանում 1917 թվականի հեղափոխությունից հետո կազմավորվեց նորաստեղծ սոցիալիստական պետությունը: Հետևաբար այս ժամանակաշրջանը պետք է առանձնացնել ու քննարկել պետություններից յուրաքանչյուրի համար առանձին՝ կրկին փորձելով համեմատություններ անել:
- 1921 թ.-ից՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանում իրականացվող բարեփոխումները, բնականաբար, ուղղակի կերպով իրենց անդրադարձն էին գտնում Հայաստանի կրթական համակարգում:

1. 20-րդ դարի սկզբներին մանկավարժական մոտեցումների հարցը, խնդիրները:

XX դարի սկիզբը սկիզբն էր նաև համաշխարհային դպրոցի և մանկավարժության բնագավառում տեղի ունեցած էական առաջընթացի: Դրան նպաստել են մի շարք կարևոր գործոններ. գիտելիքների աննախադեպ աճը, որը պետք է յուրացվեր սովորողների կողմից, բնության նոր հետազոտությունների արդյունքները, տեխնիկական զարգացման սկզբնավորումը: Այս ժամանակաշրջանում նկատելիորեն ավելացավ մանկավարժական կենտրոնների թիվը: XX դարասկզբում մանկավարժության բնագավառում առկա էին աստիճանաբար զարգացան հետևյալ ուղղությունները.

Ա. Մանկավարժական տրադիցիոնալիզմը (սոցիալական, կրոնական և փիլիսոփայական մանկավարժություն)

Բ. Նորարարական մանկավարժություն

Գ. Ազատ դաստիարակություն, փորձարարական մանկավարժություն, պրագմատիկ մանկավարժություն, աշխատանքային ուսուցում և դաստիարակություն

Դ. Ուսումնա-դաստիարակչական գործընթացի արդիականացում

Ուսումնասիրության մեջ կանդրադառնամ Ռուսաստանի և Հայաստանի այդ ժամանակաշրջանի կրթական համակարգում մանկավարժության վերոնշյալ ուղղությունների ունեցած ազդեցությանը:

2. Դպրոցական առաջին արմատական ռեֆորմը և դրա ձախողումը, դասագրքերի վտարումը դպրոցից:

Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո Ռուսաստանում իրականացված ռեֆորմների մեծ մասը այնքան էլ նպատակահարմար չէին և չարդարացրեցին սպասելիքները:

Նոր դպրոցի հիմնադրման սկզբունքները մշակվում էին լուսավորության պետական կոմիտեի կողմից, որը գլխավորում էին Լունաչարսկին և Լեպեշինսկին: Սույն կոմիտեի կողմից 1918 թվականի հոկտեմբերի 16-ին հրապարակվել է կարգադրություն՝ Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության միասնական աշխատանքային դպրոցի ստեղծման մասին: Միասնական դպրոցը իննամյա էր, առաջին աստիճանը՝ 5 տարի, երկրորդը՝ 4 տարի տևողությամբ:

Սակայն այս ծրագրերն իրականացնելու համար պետությունը չուներ ո՛չ ֆինանսական միջոցներ, ոչ էլ համապատասխան մանկավարժական կադրեր: Սրանք հեռահար նպատակներ էին, որոնց մեծ մասն իրականություն դարձան հետագայում՝ 1930-50-ական թվականներին:

1921 թվականին դպրոցը ենթարկվեց կառուցվածքային փոփոխության. հանրակրթության հիմքում 7-ամյա դպրոցն էր (4 + 3 տարի): Այս դպրոցի համար հաստատված նոր ծրագրերը գործեցին մինչև 1924 թվականը:

XX դարասկզբին իրականացված բարեփոխումները, կապված հասարակարգային արմատական փոփոխության հետ, առնչվում էին նորաստեղծ պետության բոլոր ոլորտներին: Կրթության բնագավառում տոտալ բարեփոխումներն ունեին իրենց և՛ դրական, և՛ բացասական կողմերը: Դրական էր լայն հնարավորությունների տրամադրումը նորարարական գաղափարներին, առաջադեմ, պրպտող մտքին: Սակայն ժխտողական վերաբերմունքը նախորդ հասարակարգի ձեռքբերումների նկատմամբ մասնավորապես մանկավարժության բնագավառում՝ բացասաբար անդրադարձավ զարգացման հետագա ընթացքի վրա:

3. Հայ ժողովրդի պատմության մեջ դպրոցն իր ուրույն տեղն ունի:

Հայ ժողովուրդը, պատմության ճակատագրի բերումով բաժանված լինելով երկու հիմնական հատվածի, ստիպված էր իր մշակույթը զարգացնել հասարակական – քաղաքական տարբեր պայմաններում: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և հայ-ռուսական կապերի ուժեղացումը նախապայմաններ ստեղծեցին, որպեսզի հայկական մշակույթն ավելի սերտորեն առընչվի ռուսական մշակույթի հետ: Արևմտահայ հատվածն ավելի շատ կրում էր եվրոպական, հատկապես՝ ֆրանսիական մշակույթի ազդեցությունը: Միաժամանակ, հայ ժողովրդի մեկ այլ խոշոր հատված, ապրելով աշխարհի զանազան երկրներում և գտնվելով տարբեր ազդեցությունների տակ, այնուամենայնիվ, կարողացավ ստեղծել մշակութային նշանակալի արժեքներ: Դարասկզբի հայ առաջավոր կրթավայրերից էին Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Աստրախանի Աղաբաբյան, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցները, Վենետիկի Մուրադյան, Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանները: Արևելահայ կրթական գործում կարևոր դեր է կատարել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (հիմն. է 1824-ին): Նրա շրջանավարտները մեծապես նպաստել են հայ գրականության, հրապարակախոսության, թատրոնի, նկարչության, երաժշտության զարգացմանը: Դպրոցի առաջին տեսուչն է եղել Հ. Ալամդարյանը, որը բեղմնավոր գործունեություն է ծավալել դպրոցը ուսուցման իսկական դարբնոց դարձնելու համար:

Մինչև 1917 թվականը, Արևելյան Հայաստանը գտնվում էր Ռուսաստանի կազմում, հետևաբար՝ անհրաժեշտ եմ համարում ուսումնասիրության մեջ քննարկել հայկական մշակույթի, մասնավորապես՝ կրթական համակարգի առընչությունը Ռուսաստանում նույն ոլորտի փոփոխություններին:

Արևմտահայ հատվածն ավելի շատ կրել է եվրոպական, հատկապես՝ ֆրանսիական մշակույթի ազդեցությունը: Արևմտյան Հայաստանում 1915 թվականի Մեծ եղեռնից հետո հայկական դպրոցները գործնականում դադարեցին գոյություն ունենալուց:

1918-20 թվականներին Արևելյան Հայաստանի տարածքում կազմավորվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը: Չնայած երկրում տիրող պատերազմական իրավիճակին՝ 1918 թվականին արդեն սկսում է գործել Հանրային կրթության մինիստրությունը:

Ռուսաստանում 1917 թվականի հեղափոխությունից հետո կազմավորվեց նորաստեղծ սոցիալիստական պետությունը: Ռուսաստանում 1918-19 թվականները և 1920-ական թվականների սկիզբը համընդհանուր ռեֆորմների շրջան էր նաև կրթական ոլորտում: Այդ ժամանակաշրջանում իրականացված ռեֆորմների հիմնական մասը չարդարացրեցին սպասելիքները և հետագայում՝ 1921 թվականին իրականացված դպրոցի կառուցվածքային փոփոխությունից հետո մեծ մասամբ չգործեցին:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանում իրականացվող բարեփոխումները, բնականաբար, ուղղակի կերպով իրենց անդրադարձն էին գտնում Հայաստանի կրթական համակարգում:

4. Խորհրդային Միության փլուզումից հետո կազմավորված պետությունները գտնվում էին միմյանցից տարբեր աշխարհաքաղաքական և տնտեսական պայմաններում: Սակայն բոլոր նորանկախ պետություններում էլ քաղաքական, տնտեսական, կրթամշակութային կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում նաև՝ հանրակրթական բնագավառում անհրաժեշտաբար իրականացվեցին բարեփոխումներ: Բարեփոխումներն իրագործվել են ինչպես արևմտյան երկրների կրթական համակարգի փորձը հաշվի առնելով, այնպես էլ՝ փոձելով պահպանել խորհրդային դպրոցի առավելությունները: Այս տեսանկյունից հետաքրքիր է քննարկել խորհրդային պետության կազմավորման վաղ փուլում իրագործված կրթական բարեփոխումները, փորձել տեսնել դրանց ընդհանրություններն ու օրինաչափությունները:

Գրականություն

1. Պոլոնսկի Վ. Մ. Դպրոցականների գիտելիքների գնահատումը – Եր. «Լույս»
2. И. П. Костенко «Проблема качества математического образования в свете исторической ретроспективы»
3. Б. М. Бим-Бад, Очерки по истории и теории педагогики,Москва,2003

Статья была представлена во время работ в 6-ой секции.

ՀԱՍԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՌԻՎԻՆԻ ՄԵԹՈԴԻԿԱՅՈՒՄ

Պարսամյան Վ.Ռ.

Գնահատման և թեստավորման կենտրոն, Երևան, Հայաստանի Հանրապետություն, vahasar@gmail.com

Համառոտագիր: Հոդվածը նվիրված է ուսումնական գործընթացում մանկավարժական տեխնոլոգիաների, մասնավորապես Ռիվինի մեթոդիկայի կիրառման ընթացքում դրսևորվող հասկացման գործընթացների ուսումնասիրությանը: Ներկայացված է, թե ինչ նշանակություն ունի տեխնոլոգիայով նախատեսված յուրաքանչյուր քայլը և ինչպես է այն ապահովում յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացումը առնվազն հասկացման մակարդակով:

Բանալի բառեր. Ուսումնական տեխնոլոգիա, կոլեկտիվ ուսումնական պարապմունքներ, բառի իմաստ, հասկացման սահման, ներքին խոսք, էքստերիորիզացիա, ինտերիորիզացիա, համաձայնության երկխոսություն և այլն:

ПРОЦЕССЫ ПОНИМАНИЯ В МЕТОДИКЕ РИВИНА

Парсамян В.Р.

Центр оценки и тестирования (ЦОТ), Ереван, Республика Армения, vahasar@gmail.com

Аннотация. Статья посвящена изучению процессов понимания, проявляющихся во время применения в учебном процессе педагогических технологий, в частности методики Ривина. Представлено, какое значение имеет каждый шаг, предусмотренный технологией, и как он обеспечивает усвоение материала каждым учащимся как минимум на уровне понимания.

Ключевые слова: Учебная технология, коллективные учебные занятия, смысл слова, граница понимания, внутренняя речь, экстериоризация, интериоризация, диалог согласия и т.д.

Ուսումնական գործընթացի գնահատման ամենակարևոր չափանիշները մեր կարծիքով ուսուցման որակն ու արդյունավետությունն են: Որակյալ ուսումնական գործընթաց ասելով մենք նկատի ունենք, որ այդ գործընթացի մասնակից յուրաքանչյուր սովորող ուսումնական նյութը առնվազն հասկանալ ու մակարդակով է յուրացնում: Ուսումնական գործընթացի թե՛ որակը, թե՛արդյունավետությունը պետք է ապահովեն կիրառվող ուսումնական տեխնոլոգիաները: Ընդ որում, դրանք պետք է ապահովեն, որ արդյունքի հասնի ուսումնական խմբի յուրաքանչյուր սովորող: Քանի որ հասկացումը անհատական գործընթաց է և յուրաքանչյուր սովորողի մոտ այն տեղի է ունենում տարբեր ժամանակահատվածներում, ուստի մեր նպատակին ծառայող տեխնոլոգիաները չեն կարող նախատեսված լինել ընդհանուր ճակատով ուսումնական գործընթացի կամ այլ կերպ ասած՝ դաս-դասարանային ուսուցման համար: Մեր ուսումնասիրությունների ու մանկավարժական պրակտիկայի արդյունքում մենք հանգել ենք այն եզրակացության, որ վերը նշված պահանջներին բավական լավ համապատասխանում են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների համար նախատեսված տեխնոլոգիաները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ մեթոդիկաները նախատեսված չեն կոնկրետ ուսումնական նյութի համար և կապ չունեն առարկայական որևէ բովանդակության հետ՝ պետք է հասկանանք և համաձայնենք, որ չնայած դրանք վերնագրված են մեթոդիկաներ բառով, սակայն իրականում տեխնոլոգիաներեն: Այդ մեթոդիկաների մասին հոդվածներեն հրատարակել Մ. Մկրտչյանը, Ա. Ղազարոսյանը, Վ. Պարսամյանը, Հ Մարգարյանը և այլք:

Որքան մեզ է հայտնի, մինչև հիմա հիմնականում մշակվել կամ ստեղծվել են կոլեկտիվ ուսումնական պարապմունքների 8 կամ 9 ընդհանուր մեթոդիկաներ.

- Ռիվինի մեթոդիկան,
- գիտելիքների անընդհատ հաղորդման մեթոդիկան կամ «նորագույն մանկավարժական տեխնոլոգիան»,
- Թեմաների փոխհաղորդման մեթոդիկան,
- Առաջադրանքների փոխանակման մեթոդիկան,
- Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկան,
- Հասկացման բերող քարտերի մեթոդիկանն
- Տեքստերի ստեղծման մեթոդիկան (Ռիվինի մեթոդիկային հակադարձ մեթոդիկա),
- Տակտային մեթոդիկան:

Մնացած մեթոդիկաներն ըստ էության վերը նշվածների այս կամ այն խնդրի լուծմանը հարմարեցված ձևափոխված տարբերակներեն:

Հասկացման մակարդակով յուրացման խնդիրների ուսումնասիրության տեսանկյունից մեզ համար վերը նշված մեթոդիկաներից հատկապես առանձնանում են երկուսը՝ Ռիվինի և հասկացման բերող քարտերի մեթոդիկաները:

Ռիվինի մեթոդիկան նախատեսված է փոփոխական կազմով զույգերով անծանոթ ուսումնական տեքստերը ուսումնասիրելու համար: Ուսումնասիրությունը կատարվում է պարբերություն առ պարբերություն (յուրաքանչյուր զույգում ուսումնասիրվում է մեկական պարբերություն), որոնք հասկանալուց, յուրացնելուց հետո վերնագրվումեն: Մեթոդիկայի հիմքում ընկած է համագործակցության համատեղ քննարկման ձևը՝ այսինքն, սովորողներից յուրաքանչյուրը իր տեքստի ամեն մի պարբերություն կարդում, քննարկում, պարզաբանում և վերնագրում է ընկերոջ օգնությամբ: Փոխադարձաբար ինքն էլ օգնում է ընկերոջը կարդալ, հասկանալ, յուրացնել և վերնագրել վերջինիս թեմայի հերթական պարբերությունը:

Յուրաքանչյուր հաջորդ պարբերության ուսումնասիրության համար կազմվում է նոր զույգ: Յուրաքանչյուր զույգում սովորողները նախ ներկայացնում, պատմում են նախորդ պարբերությունների բովանդակությունը, նոր միայն կարդում, քննարկում, պարզաբանում և վերնագրում հաջորդը: Նշված ալգորիթմով ամբողջ տեքստը ուսումնասիրելուց հետո սովորողը հանձնում է տեքստն ու ստանում նորը: Նոր տեքստն ուսունասիրվում է նույն ձևով: Մեթոդիկայի համաձայն՝ յուրաքանչյուր սովորողի համար աշխատանքը շարունակվում է այնքան, մինչև սովորողը յուրացնում է նախատեսված բոլոր տեքստերը:

Իսկ ի՞նչն է այս մեթոդիկայով աշխատելու ժամանակ նպաստում ուսումնասիրվող նյութը հասկանալ ու մակարդակով յուրացնելուն: Մեր ուսումնասիրությունները ու տարիների փորձի ամփոփումը ցույց են տվել, որ այս տեխնոլոգիայով աշխատելիս հասկացումն ապահովող հիմնական տեխնոլոգիական միջոցը պարբերության մշակման ձևն է: Մանուկ Մկրտչյանի «Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական տեսական և գործնական հարցերը» գրքի «Ըստ պարբերությունների տեքստերի ուսումնասիրման մեթոդիկան (Ռիվինի մեթոդիկա)» բաժնում պարբերությունների մշակման ձևը ներկայացվում է այսպես. «Պարբերությունը մշակելիս կատարվում են հետևյալ գործողությունները:

Տեքստի ընթերցում, որոշ բառերի իմաստի պարզաբանում և հասկացման սահմանների ճշգրտում: Որոշ նախադասությունների (կամ այդ նախադասությունների մասերի) իմաստի ըմբռնում, պարբերության գլխավոր իմաստի որոշում, փաստարկների և եզրահանգումների առանձնացում, առանձին օրինակների քննարկում, պարբերության և մյուս պարբերությունների հետ նրա կապի ամբողջական ըմբռնում, պարբերության բովանդակության և շարադրանքի մասին սեփական վերաբերմունքի (կարծիքի) արտահայտում, գլխավոր մտքի վերնագրի գրավոր նշում» [1 էջ 89]:

Փորձենք վերլուծել այս մեջբերումը: Առաջին նախադասության մեջ պահանջվում է.

ա) ընթերցել տեքստը,

բ) պարզաբանել որոշ բառերի իմաստները,

գ) ճշգրտել որոշ բառերի հասկացման սահմանները:

Առաջին քայլի, այսինքն՝պարբերության ընթեցման նպատակը ընդհանուր պարբերության մասին առաջին մոտավորությամբ պատկերացում կազմելն է:

Այժմ փորձենք հասկանալ «Բառի իմաստի ըմբռնում» «հասկացման սահմանների ճշգրտում» արտահայտությունները, բնականաբար ճշտելով դրանց բաղադրիչ բառերի իմաստի ընկալումը մեր կողմից:

Արդի հայերենի բացատրական բառարանում իմաստի կամ բառի իմաստի մասին գրված է. «Իմաստ – մտքով ընկալելի բովանդակություն, հասկացություն, միտք»: [2]: Իսկ «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանում կարդում ենք. «Լեզվի մեջ **բառը** իր հնչյունական կազմով փոխանցում է հասկացության, առարկայի, գործողության, իրականության երևույթների, նրանց կառուցվածքի կամ փոխհարաբերությունների իմաստը: Բառի մեջ զուգորդվում են հնչյունական, բառիմաստային, և քերականական հատկանիշներ՝ իմաստի որոշակիություն, ձևի կայունություն, արտասանության ամբողջականություն, բաղադրիչների համադրություն կամ հարադրություն: Բառը այս հատկանիշներով տարբերվում է լեզվական այլ միավորներից, օրինակ ի տարբերություն լեզվի բառակապակցության և նախադասության, բառն ինքնուրույն կարող է արտահայտել առանձին ամբողջական իմաստ կամ հասկացություն, **<u>բառակապակցությունը</u>** նույնպես կարող է արտահայտել ամբողջական իմաստ սակայն երկու կամ ավելի կապակցված բառերի միջոցով, իսկ **<u>նախադասությունը</u>**՝ արտահայտում է ամբողջական միտք» [3]:

Բառի իմաստի վերաբերյալ բավական հետաքրքիր վերլուծություն է ներկայացնում Լ. Վիգոդսկինիր «Մտածողություն և խոսք» աշխատանքում [4]: Հենվելով հոգեբան Պոլանի տեսակետներին՝ նա ասում է, որ բառի իմաստը հոգեբանական բոլոր գործոնների ամբողջությունն է, որը բառի շնորհիվ առաջանում է մեր գիտակցության մեջ: Այդ պատճառով էլ բառի իմաստը միշտ դինամիկ է, շարժուն, բարդ կառուցվածքով, որն ունի տարբեր կայունությունների մի քանի գոտիներ: Ըստ Լ. Վիգոդսկիու՝ բառի նշանակությունը այդ գոտիներից մեկն է: Սակայն կարևոր է իմանալ, որ բառի իրական նշանակությունը հաստատուն չէ: Մի գործածության մեջ բառը հանդես է գալիս մեկ նշանակությամբ, իսկ մյուսում ձեռք է բերում նոր նշանակություն: Բառի նշանակությունը ներուժի նման է, որն իրականանում է կենդանի խոսքում, որտեղ այդ նշանակությունը հանդիսանում է իմաստի կառույցի միայն քարը: Օրինակների վրա բացատրելով այս ամենը՝ Վիգոդսկին, հղում անելով դարձյալՊոլանին, ասում է. «Բառի իմաստը բարդ երևույթ է, շարժուն, առանձին գիտակցության նման և այդ նույն գիտացության համար կախված հանգամանքներից հայտնի չափով անընդհատ փոփոխվող: Այդ առումով բառի իմաստը անսպառ է: Բառը ձեռք է բերում իր իմաստը արտահայտության մեջ, բայց արտահայտությունն ինքը իմաստ է ձեռք բերում պարբերության համատեքստում, պարբերությունը՝ գրքի, գիրքը՝ հեղինակի ստեղծագործության ամբողջ համատեքստում: Իսկապես յուրաքանչյուր բառի իմաստը ի վերջո որոշվում է գիտակցության մեջ առկա այդ բառով արտահայտված պահերի ողջ հարստությամբ» [4 էջ 12]:

Իսկ Ա. Լեոնտևը գտնում է, որ. «բառի նշանակությունը իրենից ներկայացնում է իրականության արտացոլումը անկախ մարդու նրա նկատմամբ անհատապես անձնական վերաբերմունքից: Բառի նշանակությունը ունի իրական գոյություն և մարդու կողմից գիտակցվում է որոշակի գործունեության մեջ, և այդտեղ էլ բառը ձեռք է բերում իմաստ, այսինքն՝ մարդու համար սուբյեկտիվ նշանակություն»: [5]:

Այս վերլուծությունից հասկանալի է դառնում, որ Ռիվինի մեթոդիկայի նկարագրության մեջ հեղինակի «որոշ բառերի իմաստի ըմբռնում» պահանջի նպատակն է, որ սովորողը փորձի հասկանալ ոչ թե ինչ է նշանակում այդ բառն ընդհանրապես, այլ ինչ իմաստով է գործածված կոնկրետ տվյալ բառակապակցության (հետո կտեսնենք, որ նաև նախադասության և ամբողջ պարբերության) համատեքստում:

Շատ կարևոր պահանջ է նաև այս նախադասության երրորդ՝ «հասկացման սահմանների ճշտում» պահանջը: Հոգեբանության և մանկավարժության մեջ գոյություն ունի հերմենևտիկական շրջան հասկացությունը: Այդ հասկացությունը գործածության մեջ դնող առաջին հեղինակներից մեկը՝ Շլեյերմախերը գտնում է. «Հասկացման գործընթացը սկզբունքորեն չի կարող ավարտվել,և միտքն անընդհատ շարժվում է ընդլայնվող շրջանով: Կրկնվող վերադարձը ամբողջից մասին և մասից ամբողջին փոխում և խորացնում է մասի իմաստի ընկալումը՝ ամբողջը անընդհատ ենթարկելով զարգացման» [6]: Զարգացնելով այս տեսությունը՝ հերմենևտիկ շրջան հասկացությունը մեկնաբանել են նաև Վ. Դիլտեյը, Մ. Հայդեգգերը, Գ. Գադեմարը և այլք: Եթե փորձենք հերմենևտիկ շրջանի գաղափարը կիրառել տեքստի վրա, ապա կստացվի, որ բառի իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ նախադասության իմաստը: Նախադասության իմաստնը նկալելուց հետո բառի իմաստի ընկալումը խորանում է, որն էլ իր հերթին ազդում է նախադասության ընկալման խորացման վրա: Այդ գործընթացը շարունակական է, սակայն ընկալման ինչ որ մի աստիճանում հարկավոր է կանգ առնել և շարունակել ուսումնասիրել տեքստի մնացած մասը:

«Հասկացման սահմանների ճշտումը» մեր կարծիքով նշանակում է որոշել հերմենևտիկ շրջանի այն մակարդակը, որտեղ հարկավոր է կանգառնել, այսինքն՝ ընդունել, որ տվյալ պարբերության ընկալման համար թե՛ նախադասության և թե՛ ընտրված բառի, կամ բառերի իմաստի ընկալման մակարդակը բավարար է: Ըստ էության փաստորեն կատարվում է նաև հաջորդ քայլը՝ «որոշ նախադասությունների (կամ այդ նախադասությունների մասերի) իմաստի ըմբռնում»:

Հաջորդ պահանջը «պարբերության գլխավոր իմաստի որոշումն» է: Սա շատ կարևոր է թե՛ ճիշտ վերնագիր ընտրելու, թե՛ ամբողջ պարբերության իմաստի ճիշտ ընկալման համար: Ճիշտ վերնագիր ընտրելը ոչ թե նպատակ, այլ միջոց է Ռիվինի մեթոդիկայով աշխատելու համար: Ուսումնական գործընթացը այս տեխնոլոգիայով կազմակերպողը, ընթերցելով պարբերությունների վերնագրերը, արդեն իսկ կարողանում է պատկերացնել, թե որքանով են դրանք ճիշտ ընկալվել սովորողների կողմից:

Սակայն մինչ վերնագրի ընտրությունը անհրաժեշտ է ավարտին հասցնել պարբերության ընկալումը: Դա իրականացնելու համար հարկավոր է կատարել հերթական պահանջները՝ կատարել փաստարկում ու եզրահանգումներ, ապա հասկացածը քննարկել օրինակի վրա:

Եվ վերջապես, յուրաքանչյուր պարբերություն ամբողջ տեքստի մաս է, ուստի այն հասկանալու համար անհրաժեշտ է ըմբռնել տվյալ պարբերության կապը մյուս պարբերությունների հետ: Այստեղ հարկավոր է նկատել, որ առաջին պարբերությունը վերնագրելու համար կարիք չկա կարդալու ամբողջ տեքստը: Հիշենք, որ յուրաքանչյուր պարբերության վրա աշխատելուց առաջ սովորողը վերապատմում է նախորդ պարբերությունների բովանդակությունը: Հենց դրա շնորհիվ էլ վերաիմաստավորվում ու խորացվում է պարբերության ընկալումը յուրաքանչյուր հաջորդ պարբերության ընկալման շնորհիվ: Բնականաբար յուրաքանչյուր պարբերության ընկալումը հող է նախապատրաստում հաջորդի ընկալումը հեշտացնելու համար:

Շատ կարևոր է բուն վերնագրի ընտրությունը: Այն պետք է լինի հնարավորինս համառոտ և արտահայտի պարբերության գլխավոր իմաստը: Այսինքն՝ այս քայլով սովորողը պետք է առանձնացնի գլխավորը երկրորդականից, էությունը բացատրությունից ու նկարագրությունից:

Հասկանալի է, որ սովորողները, նման աշխատանքի փորձ չունենալով, սկզբնական շրջանում կարող են ունենալ բազմաթիվ դժվարություններ: Բնականաբար հարց է առաջանում՝ ինչպես արագ և արդյունավետ սովորեցնել ըստ պարբերությունների աշխատելը: Այդ նպատակով էլ Մ. Մկրտչյանը տալիս է հաջորդ ցուցումը. «Տեքստերի վրա աշխատելու բավարար հմտությունների բացակայության դեպքում հանձնարարվում է օգտագործել, այսպես կոչված, հարցարաններ: Դրանք կազմվում են պարբերության տիպին համապատասխան: Օրինակ, այն պարբերությունների համար, որտեղ ներմուծվում ու սահմանվում է նոր հասկացություն, կարելի է հանձնարարել հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ հասկացություն է սահմանվում:

2. Ո՞ր օբյեկտների համար է ներմուծվում սահմանումը (հասկացությունը):

3. Ի՞նչ հասկացություններ են մասնակցում ձևակերպմանը: Դրանցից որո՞նք կարելի է սահմանել (տալ դրանց սահմանումը):

4. Վերցնելով առանձին օբյեկտ և ստուգելով այն սահմանման միջոցով՝ պարզել, թե այդ օբյեկտը օրինակ հանդիսանո՞ւմ է:

5. Ի՞նչ է նշանակում՝ տվյալ սահմանումը չի համապատասխանում տվյալ օրինակին: Դա ցույց տալ օրինակով:

6. Եթե նախկինում դուք հանդիպել եք նման սահմանման, ապա որո՞նք են դրանց տարբերությունները»[1 էջ 90]:

Որոշ ժամանակ հարցարանների օգնությամբ աշխատելուց հետո սովորողների մոտ աստիճանաբար սկսում են ձևավորվել պարբերություններ հետ աշխատանքի կարողություններ: Այդ սկզբունքով սովորողների կարողությունների ու հմտությունների զարգացման մասին Ա. Լեոնտևն ասում է. «Որպեսզի երեխայի մոտ կառուցենք նոր մտավոր գործողություն, այն անհրաժեշտ է նախապես երեխային տալ արտաքին գործողություն, այսինքն էքստերիորիզացիա անել նրան: Այդ էքստերիորիզացված ձևում, արտաքին գործողությունների ծավալման ձևում և այն նախապես ձևավորվում է: Միայն հետո նրա աստիճանական ձևափոխման-ընդհանրացման գործընթացի արդյունքում, նրա օղակների ուրույն կրճատման և մակարդակի փոփոխության, որի վրա այն կատարվում է, տեղի է ունենում նրա ինտերիորիզացիան, այսինքն՝ նրա ներքին գործողություն դառնալը, այժմ արդեն ամբողջությամբ երեխայի գիտակցության մեջ ընթացող»[7]:

Կա պարբերությունների վրա աշխատելու հմտություններ ձևավորելու ևս մեկ ճանապարհ: Եթե կան Ռիվինի մեթոդիկայով, այսինքն պարբերությունների հետ աշխատելու փորձ ունեցողներ, ապա կարելի է որոշ ժամանակ փորձ չունեցող սովորողների ուսումնական գործընթացը կազմակերպել փորձառուների հետ համատեղ: Այս դեպքում շատ կարտոր է, որ փորձառու սովորողները, ոչ թե ստանձնեն ուսուցչի դեր և վերջում ներկայացնի պարբերության պատրաստի վերնագիրը, այլ հարցերի միջոցով հրահիրեն այնպիսի քննարկում, որի ընթացքում փորձ չունեցող սովորողները անցնեն այն ամբողջ մտավոր գործընթացը, որի արդյունքում պետք է տեղի ունենա բառի, բառակապակցության, նախադասության և ամբողջ պարբերության իմաստի ընկալումը:

Անկախ այն հանգամանքից, թե զույգի անդամները փորձառու են թե անփորձ, Ռիվինի տեխնոլոգիայի համաձայն, պարբերության թե՛ ընկալումը, թե՛ վերնագրումը տեղի են ունենում քննարկման և փոխհամաձայնության միջոցով: Անհամաձայնության առկայությունը հայտանիշն է այն բանի, որ քննարկողներից որևէ մեկը կամ նույնիսկ երկուսն էլ ճիշտ չեն ընկալել պարբերության բուն իմաստը: Երկխոսության ժամանակ փոխհամաձայնության մասին բավական հետաքրքիր տեսակետ ունի Մ. Մ. Բախտինը: Ըստ նրա՝ գոյություն ունի երկխոսության 5 տեսակ, որոնք նա դասավորում է հիերարխիկ կառուցվածքով, և դրանց մեջ բարձրագույն աստիճանում գտնվում է համաձայնության երկխոսությունը [8 էջ 135]:

Տեխնոլոգիական հաջորդ կարևոր պահը նոր զույգում ընկերոջը նախորդ պարբերության կամ պարբերությունների վերապատմումն է վերնագրերի օգնությամբ: Փորձենք համեմատել վերնագիրը Լ. Վիգոդսկու «ներքին խոսք» հասկացության հետ: Մի դեպքում սովորողը ուսումնասիրում է պարբերությունը, հասկանում այն, որի արդյունքում հասկացածը վերափոխվում է ներքին խոսքի (որն էլ սովորողը ձևակերպում է որպես վերնագիր), ապա հաջորդ դեպքում, այսինքն նոր զույգում այդ ներքին խոսքը նա նորից վերաձևակերպում է որպես արտաքին խոսք, այսինքն պատմում է պարբերությունն ըստ իր ընկալման: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ զուգընկերը ոչ թե պասիվ լսող է, այլ նույնպես փորձում է հասկանալ լսածը, ուստի հաճախ ստիպված է ընդհատել պատմողին և հարցեր տալ: Հարցերին պատասխանելու ժամանակ հաճախ պատմողը ստիպված է լինում վեահիմաստավորել ընկալածը և բացահայտել, որ պարբերությունն այնքան էլ լիարժեք չի ընկալել:

Կախված փորձից, տեքստի բարդությունից և այլն՝ այնուամենայնիվ կարող են մնալ չընկալված ինչ-ինչ բաներ: Կան դրանց վերհանմանը և շտկմանը նպաստող մի շարք տեխնոլոգիական միջոցներ, ինչպես, օրինակ՝քննարկումներ փոքր ենթախմբերում: Ռիվինի մեթոդիկայով նախատեսված է թեմայի քննարկում փոքր ենթախմբերում: Այդ ժամանակավոր ենթախմբի մեջ կարող են մտնել այն սովորողները, որոնք արդեն ուսումնասիրել ու ավարտել են այդ տեքստը, նրանք, ովքեր աշխատում են այդ տեքստի վրա, ինչպես նաև նրանք, ովքեր պատրաստվում են սկսել այդ տեքստի ուսումնասիրությունը [1էջ91]:

Ոչ լիարժեք ըմբռնվածի ճշգրտմանը նպաստող կա ևս մեկ հանգամանք: Դա այն է, որ նոր տեքստի կամ տեքստերի վրա աշխատելիս սովորողը դեռ մի քանի անգամ կհանդիպի այնպիսի զույգի, որը ուսումնասիրում է իր նախկին տեքստը:Աշխատելով նման զույգերի հետ սովորողը ոչ միայն վերհիշում, այլ բացատրելով կամ նոր տեսակետներ ունեցող սովորողի հետ քննարկելով արդեն յուրացրած պարբերությունը, ըստ էության էլ ավելի է խորացնում իր հասկացման մակարդակը:

